AZG NEW PDF.qxd 1/20/2010 11:02 PM Page 1

Azg Ազգ

21 ՅՈՒՆՈՒԱՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 8(4389)

ISSN: 1829-1651

Ահա, այսպիսի Թուրքիա

Անկարայի համալսարանի՝ եվրոպական համայնքների ուսումնասիրման կենտրոնը Թուրքիայի 1032 քաղաքացիների մեջ անց կացրել է սոցիալական հարցում: Այս հարցման համաձայն՝ թուրքերի 37,5 տոկոսը Թուրքիային թշնամի երկիր է համարել ԱՄՆ-ին, 10,9 տոկոսը՝ Հայաստանին, 10,6 տոկոսը՝ Իսրայելին, թուրքերի 6,1 տոկոսը թշնամի է համարել Հունաստանին, իսկ 5,1 տոկոսը՝ Ֆրանսիային:

Անկարայի համալսարանի վերոհիշյալ կենտրոնը նաեւ փորձել է պարզել, թե քանի՞ տոկոս թուրքեր են կողմ հայ-թուրքական Արձանագրությունների վավերացմանը: Հարցման մասնակիցների 35 տոկոսը կողմ է Հայաստանի հետ սահմանի բացմանը, բայց միայն պայմանով, որ Հայաստանը Ադրբեջանին վերադարձնի Ղարաբաղը: 28 տոկոսը կողմ է Հայաստանի հետ «շփվելուն», եթե հայերը հրաժարվեն ցեղասպանության ճանաչման պնդումներից: Եվ միայն 6 տոկոս թուրքերն են, որ համաձայն են լավացնել Հայաստանի հետ հարաբերություններն առանց որեւէ նախապայմանի:

Անցկացվել է նաեւ հարցում, թե համաձա՞յն են արդյոք թուրքերը անդամակցելու Եվրոմիությանը: 55,3 տոկոսը համաձայն է, իսկ 25 տոկոսը՝ ոչ, մնացածը դժվարացել են պատասխանել:

«Այդ փաստաթղթում կան Թուրքիայի համար անընդունելի գաղտնածածուկ մոտեցումներ»

Ասել է վարչապետ Էրդողանը՝ մեկնաբանելով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԵՆ

Հունվարի 12-ի նիստում ՀՀ Սահմանադրական դատարանը որոշ վերապահումներով հավանություն էր տվել դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման հայ-թուրքական արձանագրություններին, նշելով, որ դրանցում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են երկրի սահմանադրությանը:

Սաուդյան Արաբիա: Դեռեւս հունվարի 18-ին Թուրքիայի արտգործնախարարությունը հաղորդագրություն էր տարածել՝ մասնանշելու համար, որ Հայաստանի Սահմանադրական դատարանի ընդունած փաստաթուղթը «հակասում է արձանագրությունների ոգուն ու տառին եւ խարխլում բանակցային ողջ գործընթացը, ուստի խոչընդոտ է ուղենշված նպատակներին»:

Ըստ երեւույթին այդ կոչս ոճն էլ պատճառ է դարձել, որ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հեռախոսակապ հաստատի թուրք պաշտոնակցի հետ: Այդ մասին երեկ կայքէջում նշել էր թուրքական հանրային հեռուստատեսությունը, ապա նաեւ մամուլը, մասնավորապես կառավարամետ «Ենի շաֆաք»:

Թուրքական թերթը, վկայակոչելով Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Բուրաք Օզուգերգինին, նշում է, որ Նալբանդյանը հեռաձայնել է Ահմեդ Դավութօղլուին այն ժամանակ, երբ վերջինը Զեդդայում էր:

Տես էջ 3

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՁԱՐԴԵՐ

ԼՂՀ խորհրդարանականները հանդես են եկել հայտարարությամբ

ԼՂՀ Ազգային ժողովի քաղաքական ուժերը՝ ի դեմս «Ժողովրդավարություն», «Հայրենիք» եւ «ՀՅԴ-Շարժում-88» խմբակցությունների, ընդունել են հայտարարություն Բաքվի հայերի 1990 թվականի հունվարյան ջարդերի կապակցությամբ, որում մասնավորապես ասվում է.

«Քսան տարի առաջ պաշտոնապես դեռեւս խորհրդային կոչվող Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում պետականորեն կազմակերպվեց եւ սառնաարյունորեն ի կատար ածվեց հայ բնակչության զանգվածային սպանդը: Առանձնակի դաժանությամբ սպանվեցին հազարավոր անմեղ մարդիկ՝ կանայք, երեխաներ ու ծերունիներ, իսկ տասնյակ հազարավորները, մարմնական ծանր վնասվածքներ ու հոգեկան ցնցումներ կրելով, հայրենազրկվեցին եւ բռնատեղահանվեցին:

Բաքվի հունվարյան ջարդերը, փաստորեն, Արեւելյան Անդրկովկասի բնիկ եւ իրավամբ պետականակիր հայ ժողովրդի նկատմամբ 1905-1906, 1918-1920 եւ 1988-1990 թթ. իրագործված բռնությունների ու տեղահանությունների վերջին ակորդը հանդիսացան: Դա Ադրբեջանի իշխանությունների յուրօրինակ պատասխանն էր հայրենի բնօրրանում արժանապատիվ ապրելու՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի խաղաղ, արդարացի եւ օրինական իրավունքի, որն իրականացվեց ԽՍՀՄ իշխանությունների հանցավոր թողտվությամբ»:

Խորհրդարանի քաղաքական ուժերը վերսին դատապարտելով անցյալ դարի ողջ ընթացքում Ադրբեջանում կազմակերպված հակահայ բռնությունները, դրանք գնահատում են որպես մարդու իրավունքների եւ ազատությունների զանգվածային խախտման փաստ, այլատյացության եւ ազգային անհանդուրժողականության, էթնիկ զտումների՝ Ադրբեջանի պետական քաղաքականության ակնհայտ դրսեւորում, ինչպես նաեւ մարդկության դեմ պետականորեն կատարված ծանրագույն հանցագործություն՝ Ցեղասպանություն, որի համար պատասխանատվությունը, միջազգային իրավունքի համաձայն, վաղեմության ժամկետ չունի:

Շեշտելով, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը հետամուտ է լինելու Ադրբեջանում իրագործված հակահայ բոլոր բռնություններին իրավական գնահատական տալուն ու դրանց կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելուն, խորհրդարանականները դիմում են ՄԱԿ-ին, ԵՄ-ին, ԵԱՀԿ-ին, նրա Մինսկի խմբի անդամ երկրների խորհրդարաններին՝ անցկացնել 1990թ. հունվարի 13-ից մինչեւ 20-ը Բաքվի հայ բնակչության դեմ իրագործված բռնությունների անաչառ հետաքննություն եւ իրավական գնահատական տալ ոճրագործության կազմակերպիչների ու իրականացնողների գործողություններին:

«Հետագա անցանկալի զարգացումներից խուսափելու համար պահանջում ենք դատապարտել եւ պատժամիջոցներ կիրառել հանցավոր պետության նկատմամբ: Դա ոչ միայն տուժողի իրավունքն է, այլեւ միջազգային այլանների պարտավորությունը, քանի որ ցեղասպանությունը ոճիր է համայն մարդկության դեմ», ասվում է հայտարարության մեջ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Պետդեպի ներկայացուցիչը՝ Հայաստանի խորհրդարանում

Երեկ Ազգային ժողովի փոխնախագահ Սամվել Նիկոյանն ընդունել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի Հայաստանի հարցերով երկրորդ քարտուղար Ժոզեֆ Ֆառելլիին եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան քաղաքական-տնտեսական բաժնի ղեկավար Բարթ Փարթնիին: Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-թուրքական հարաբերություններին, երկու երկրների խորհրդարաններում Արձանագրությունների վավերացմանն առնչվող հարցեր: Ս. Նիկոյանը խոսել է այն մասին, որ անհիմն է թուրքական կողմի այն տեսակետը, թե Հայաստանի ՍԴ որոշումը նախապայմաններ է պարունակում, քանի որ Արձանագրությունները երկկողմ հարաբերությունների են վերաբերում եւ կապ չունեն երրորդ կողմի հետ, իսկ ամերիկացի պաշտոնյաները նշել են, թե ստեղծվել է հայ-թուրքական հարաբերությունների հաստատման առումով պատմականորեն բարենպաստ իրավիճակ, եւ հույս են հայտնել, որ Հայաստանն ու Թուրքիան ջանքեր կգործադրեն ցանկալի հանգրվանին հասնելու համար:

Nibiru՝ սենսացիոն հորինվածք

Վերջին շրջանում ինտերնետային կայքէջերը հեղեղված են Արեգակնային համակարգում իբր հայտնված նոր մոլորակի մասին զանազան հակասական տեղեկություններով՝ խուճապ հարուցող: Դրանք մեկնաբանելու համար դիմեցինք աստղաֆիզիկոս, պրոֆեսոր Վահագն Գուրզադյանին:

- Որքանո՞վ են հիմնավոր Nibiru կոչված մոլորակի եւ Երկրագնդին դրա պատճառած հնարավոր վտանգների մասին լուրերը:

- Nibiru կամ X-մոլորակի գոյությունը եւ նրա հնարավոր բախումը Երկրի հետ, մոտ 15 տարի առաջ հայտնված ոմն էքսրասենսի շահարկումներն են՝ հենված իբր բաբելոնյան եւ մայաների արձանագրությունների վրա: Բախման թվականը նախապես կանխատեսվում էր 2003 թ., երբ, իհարկե, ոչինչ տեղի չունեցավ: Այժմ կանխատեսման թվականը 2012 է, իբր կփոխվի երկրագնդի պտտման առանցքը, եւ այսօրինակ անհեթեթություններ:

Ինչո՞ւ սա բացարձակապես չունի որեւէ գիտական հիմք: Նախ նման խոշոր մոլորակը կդիտվեր անգամ անզեն աչքով՝ բախումից շատ տարիներ առաջ, ապա, այն կխոտորեր մոլորակների ուղեծրերը: Ավելորդ է ասելը, որ Արեգակնային համակարգը եւ նրա մասնյցները գտնվում են ոչ թե անզեն աչքի, այլ աստղադիտակների մանրազնին հսկողության ներքո եւ առ այսօր որեւէ՝ անգամ ամենաչնչին անկանոնություն չի գրանցվել:

Տես էջ 2

Սարգսյան-Ալիեւ հերթական հանդիպմանը սպասելիս

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային գրաֆիկում առաջիկա օրերի առնչությամբ որեւէ նշում չկա նախագահի պաշտոնական կայքէջում, սակայն կարելի էր որեւէ այցելության մասին տեղեկություն ակնկալել, քանի որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մակարդակով արված հայտարարության համաձայն, հավանական է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները հանդիպեն այս շաբաթ: Թեեւ այս շաբաթ կայանալիք հանդիպման հավանականության մասին նշել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահը, սակայն, որոշ տեղեկությունների համաձայն, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները, Ռուսաստանի նախագահի մասնակցությամբ, կհանդիպեն հունվարի 25-ին Սոչիում:

Երեկ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց Մինսկի խմբի համանախագահներին եւ ԵԱՀԿ նախագահի ներկայացուցիչ Կասպրշիկին:

Այնուամենայնիվ, հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ զարգացումների ֆոնին հայ-ադրբեջանական բանակցությունների ընթացքն ու ղարաբաղյան հարցի կարգավորմանն ուղղված գործողությունները թերեւս առավել կարեւորված են ու կարող են անակնկալ զարգացումներ ունենալ, հատկապես որ հայաստանյան իրականության համար հանկարծակի ի հայտ եկած նորությունները կարող են վերաբերել լուրջ թեմաների, բայց չանցնել նախնական քննարկումների որեւէ փուլ:

Հունվարի 19-ին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովին (Ռուսաստան), Բեռնար Ֆասիեին (Ֆրանսիա), Ռոբերտ Բրադկեին (ԱՄՆ) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին: Արտգործնախարարության հաղորդագրության համաձայն, հանդիպմանը քննարկվել են արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացին առնչվող հարցեր, որոնց որեւէ մանրամասնում ԱԳՆ հաղորդագրությունը չի պարունակում:

Տես էջ 3

AZG NEW PDF.qxd 1/21/2010 12:05 AM Page 1

«Մեր վավերացումից հետո սահմանը չի բացվում, բացվում է Թուրքիայի վավերացումով»

Թուրքիայի արտաքին գործերի նախարարության երկուշաբթի օրը տարածած հայտարարությունը, որով ֆնանդատության էր ենթարկվում ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը, ընդամենը ներքին սպառման համար է, այնինչ Հայաստանի ԱԳՆ-ի պատասխանը ոչ մի կերպ չի վերաբերում մեր ներքին լսարանին: ԱԺ-ում Հանրապետական կուսակցության խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը**, շարունակելով իր վերոհիշյալ տրամաբանությունը, ասաց. «Միջազգային հանրությունն էլ, կարծում եմ, լուրջ չի վերաբերվում Թուրքիայի այս վերջին հայտարարությանը, առհասարակ Թուրքիան հայ-թուրքական ողջ գործընթացում աղացուցեց, որ ունի ոչ միայն ինտրիգային խաղախաղություն, այլեւ ինտրիգային խաղախաղություն»:

Իսկ Գալուստ Սահակյանի ներկայացրած իրականությունն այն է, որ մեր ՍԴ-ն ընդամենը ՀՀ սահմանադրությանը համապատասխան է ճանաչել Արձանագրությունները, ոչ ավելին. «Ինչ վերաբերում է ՍԴ-ի հրապարակած իրավական դիրքորոշումներին, ապա դրանք ԱԺ-ի համար չեն, խորհրդարանի համար այն է, որ Արձանագրությունները համապատասխանում են սահմանադրությանը: Ուստի անհասկանալի է

Թուրքիայի մտահոգությունը. Հայաստանը որեւէ ոտնձգություն չի արել արձանագրությունների վերաբերյալ եւ չի էլ անելու», շեշտեց ԱԺ մեծամասնության ղեկավարը:

Գալուստ Սահակյանը եւս մեկ անգամ հիշեցրեց, որ ԱԺ-ն Արձանագրությունները վավերացնելու է միայն թուրքական Մեջլիսի համարժեք քայլից հետո: Ընդունելով, որ Մեջլիսը կարող է եւ չվավերացնել Արձանագրությունները՝ Սահակյանը, սակայն, վստահություն հայտնեց, որ այնուամենայնիվ Թուրքիան վավերացնելու է դրանք: Հակառակ պարագայում հանրապետական պատգամավորը տեսնում է միայն Թուրքիայի պարտությունը. «Իսկ թուրքերը լավ գիտակցում են դա ու դժվար թե գնան այդ քայլին: Ինչ վերաբերում է նրան, թե ինչու ենք մենք ցանկանում վերջինը վավերացնել Արձանագրությունները, ասեմ, որ մեր վավերացումից սահմանը չի բացվելու. բացվելու է միայն Մեջլիսի վավերացումից հետո», նկատեց Սահակյանը:

Վերջում հանրապետական գործիչը անդրադարձավ նաեւ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ կայացրած դատավճռին: Ըստ Սահակյանի՝ հնարավոր է, որ սահմանված 7 տարին շատ է. «Սակայն կարծում եմ, որ եթե Նիկոլը չլիներ, ապա չէին լինի նաեւ այն տասը զոհերը», ընդգծեց Սահակյանը: Նա ընդունեց նաեւ, որ Փաշինյանը հարգանքի է արժանի այն պատճառով, որ «Նիկոլը ե՛ւ մինչեւ կալանավորվելը, ե՛ւ դատարանի դահլիճում, ե՛ւ դատավճռի հրապարակումից հետո չկոտրվեց. միշտ ասաց այն, ինչ սկզբից էլ ասում էր: Ուստի կարիք չկա պախարակելու կամ ֆնանդատելու Նիկոլին, նա նեղության մեջ է, բացի այդ, կարծում եմ, չկա վատ հայ, կան լավ հայ, եւ ավելի լավ հայ», եզրափակեց Գալուստ Սահակյանը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԿՈՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեւանա լճի եւ հայապահպանության մասին

Խոսեցին բնապահպանության եւ սփյուռքի նախարարները

Երեկ կառավարությունում սկսվեցին նախարարների հաշվետվությունները, որից հետո նրանք հանդես եկան մամուլի ասուլիսներով:

Բնապահպանության նախարար **Արամ Հարությունյանը**, ի թիվս այլ հարցերի, անդրադարձավ նաեւ Սեւանա լճի հիմնախնդիրներին: Նա մասնավորապես նշեց, որ 2009-ին Սեւանի մակարդակը բարձրացել է 38 սմ, մաքրվել է 600 հա ափամերձ տարածք, շուրջ 300 հազար մանրաձուկ է լցվել լիճ: Իսկ նախարարության բացթողումների մասին խոսելով, նախարարը նշեց Սեւանա լճի կենսառեսուրսների պահպանության հարցը: Ըստ բնապահպանության նախարարի, նախարարության 2010-ի կարեւոր ծրագրերն են 14 համայնքների զարգացման ծրագիրը, որը ֆինանսավորվելու է գերմանական կառավարության կողմից, Սեւանա լճի մակարդակի բարձրացումը, Արարատյան դաշտի խորքային հորերի եւ ընդհանրապես ջրային տնտեսության զարգացման հարցը եւ մաքուր մեխանիզմներից Նուբարաշենի եւ Լուսակերտի աղբավայրերի մշակումը:

Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանն** անցյալ տարվա ամենակարեւոր իրադարձություններն իր ղեկավարած նախարարության կայացումը եւ մյուս նախարարությունների ու գերատեսչությունների հետ համատեղ աշխատանքներ իրականացնելը համարեց: Ըստ սփյուռքի նախարարի, նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է 5 ուղղություններով՝ իրավական, գաղափարական, կազմակերպչական, իրավական եւ տեղեկատվական: Հրանուշ Հակոբյանը կարեւոր համարեց նաեւ հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման հայեցակարգը: Նրա տեղեկացմամբ, նախարարությունը, սփյուռքի հետ աշխատելիս առանձնահատուկ նշանակություն է տալիս հայապահպանման, հայրենադարձության խթանման, սփյուռքի ներուժի օգտագործման աշխատանքներին:

Հայապահպանության աշխատանքների մասին խոսելով՝ Հրանուշ Հակոբյանն առանձնացրեց ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը: Նա մասնավորապես հայտնեց, որ եթե մինչ նախարարության ստեղծումը սփյուռքից Հայաստան վերապատրաստման էին գալիս տարեկան 20-25 ուսուցիչներ, ապա անցյալ տարի՝ 84 ուսուցիչ: Նախարարը ներկայացրեց սփյուռքի հետ աշխատանքի բանաձեւերը՝ 1-ինը՝ ճանաչել, վստահել, գործակցել, 2-րդը՝ չմիջամտել, օժանդակել, երկխոսել, 3-րդը՝ համահայկական խնդիրներում միաբանվել:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՂՀ. Մեկ վարձու աշխատողը երկու մարդ է պահում

Երեկ ԼՂՀ սոցապահովության նախարար **Նարինե Ասծատրյանը** լրագրողներին է ներկայացրել անցած տարում գերատեսչության կատարած աշխատանքը: Նախարարի խոսքով՝ սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են 16 միլիարդ դրամ, երբ հինգ տարի առաջ հանրապետության տարեկան բյուջեն դրանից ավելի փիչ թիվ էր կազմում:

Կառույցի գլխավոր խնդիրները եղել են ժողովրդագրության վիճակի բարելավումը եւ սոցիալական բարեկեցության ապահովումը: Այդ շրջանակում նախարարը նշեց, որ արդեն մշակվել է ԼՂՀ ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի նախագիծ եւ շուտով կներկայացվի կառավարության քննարկմանը:

Հանրապետությունում իրականացվող միգրացիոն քաղաքականության վերաբերյալ նա ասաց, որ անելիքներն այս ուղղությամբ դեռեւս շատ են: Ակնկալվում է, որ ի դեմս հայրենադարձների՝ կունենանք ոչ թե սոցիալապես անապահով խավ, այլ տնտեսական ներուժ: Իսկ սույգ թվերով՝ հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ է տեղափոխվել 139 ընտանիք:

Աճել է ծնելիությունը: Եթե, օրինակ, հետպատերազմյան տարիներին Ղարաբաղում 1000 բնակչին բաժին էր ընկնում 15 ծնունդ, ապա վերջին տարում այդ միջին ցուցանիշը չորսով ավելացել է:

Շնորհիվ ամուսնությունների խրախուսման նպատակով ներդրված ծրագրի՝ անցյալ տարի ամուսնությունների թիվը կազմել է 947: Ջիաբված Արցախյան մեծ հարսանիքը, այդ ցուցանիշն ամենաբարձրն է ԼՂՀ անկախությունից ի վեր: Ընդ որում՝ առաջին անգամ ամուսնության նպաստից օգտվելու հնարավորություն է տրվել նաեւ զինծառայություն անցնող ՀՀ այն քաղաքացիներին, ովքեր ընտանիք են կազմել արցախաբնակի հետ:

Գործազրկության մակարդակը կազմել է ավելի քան հինգ տոկոս, եւ չնայած տնտեսական ճգնաժամին՝ 165 մարդ է տեղավորվել աշխատանքի, որոնց գերակշիռ մասը գործազուրկ էր:

Այս համատեքստում **«Ազգի»** թղթակիցը փորձել է պարզել, թե հանրապետությունում ինչ տեսակարար կշիռ են կազմում թոշակառու եւ նպաստառու խավերը: Նախարարի ներկայացրած տվյալներով, ԼՂՀ բնակչության շուրջ 63 տոկոսը տվյալ սոցիալական խմբերին է պատկանում: Այսինքն՝ մեկ վարձու աշխատողը երկու մարդ է պահում:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ստեփանակերտ

Փոխվարչապետը ԲՀԿ-ական արմատներ չունի

Օրերս փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը չբացառեց, որ կարող է հետեւել վարչապետ Տիգրան Սարգսյանի օրինակին եւ դառնալ ՀՀԿ-ի անդամ: ԲՀԿ-ի առաջնորդ Գագիկ Ծառուկյանի մամլո խոսնակ Խաչիկ Գալստյանը փոխվարչապետի հանրապետական դառնալու հավակնությունները չմեկնաբանեց, միայն ասաց, որ դա յուրաքանչյուրի անձնական որոշման հարցն է: Հիշեցմանը, թե Գեւորգյանը արմատներով ավելի մոտ էր գտնվում ԲՀԿ-ին եւ սերտ առնչություններ է ունեցել ԲՀԿ-ի հետ, Գալստյանն ասաց. «Ես այդ արմատները չեմ տեսնում: Մամուլում արծարծվեց տեսակետ, թե Արմեն Գեւորգյանը ժամանակին ԲՀԿ-ի համամասնական ընտրացուցակում է եղել. այդպիսի բան չկա: Նա վերջին 10 տարիներին Հայաստանի պետական կառավարման համակարգում առանցքային դերակատարում է ունեցել եւ ինքն է որոշում, թե որ կուսակցությունն է իր գաղափարախոսությանն ավելի մոտ»:

Անդրադառնալով հայ-թուրքական արձանագրություններին՝ Գալստյանն ասաց, որ ՍԴ-ն իրավական գնահատական եւ մեկնաբանություն տվեց քաղաքական ուժերի մտահոգություններին: Մի շարք մտահոգություններ փարատվել են, որովհետեւ իրավականորեն երկու երկրների միջեւ հարաբերություններում գլխավորը սահմանի բացումն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատումն են: «Թուրքիայի փորձերը՝ հայ-թուրքականը կապել Ղարաբաղի խնդրի հետ՝ կձախողվեն: Հայաստանը կարող է կարծրացնել իր դիրքորոշումը Ղարաբաղի հարցում, ինչն այժմ նկատվում է: Ոչ մի երրորդ ուժ չի կարող Հայաստանին ստիպել զիջումների գնալ իր համար կենսական հարցերում, իսկ Ղարաբաղի հարցը կենսական հարթության վրա է»: Խոսնակը նշեց, որ եթե Թուրքիան ձախողի գործընթացը, միջազգային լուրջ իրավական խնդիրների առաջ կկանգնի: Մինչդեռ Հայաստանը հայ-թուրքական հարաբերությունների թե՛ դրական, թե՛ բացասական ելքի դեպքում շահած է դուրս գալու: «Բացասականի դեպքում ստանալու ենք հսկայական քարոզչական պաշար՝ Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշումը միջազգային ասպարեզում ներկայացնելու համար, իսկ դրականը առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ու սահմանների բացումն են»:

ԲՀԿ-ն կոալիցիայից դուրս գալու մտադրություններ չունի: Դուրս գալու պատճառ կարող է լինել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրին: «Եթե դա այդպես լինի, եւ ՀՀԿ-ն այդ գիծը որդեգրի ու փաստաթուղթը ԱԺ մցնի վավերացման համար, ապա ԲՀԿ-ն դուրս կգա»:

Գալստյանը հավաստիացրեց, որ Ծառուկյան-Հայրապետյան «պատերազմն» ավարտվել է: ԲՀԿ-ի առաջնորդին բավարարել են Ռուբեն Հայրապետյանի հրապարակային ներողությունն ու հայտարարությունը:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Nibiru՝ սենսացիոն հորինվածք

1-ին էջից

Կան նաեւ այլ, զորեղ փաստարկներ, բացառող նման անհայտ մոլորակի գոյությունը: Իսկ NASA-ի IRAS ինֆրակարմիր տիեզերական աստղադիտակի կողմից գրանցված մի քանի նորահայտ աղբյուրները (շահարկումներում հիշատակվող), ինչը սովորական է ամեն նոր դիտակի շահագործման դեպքում, ինչպես արագորեն պարզվեց՝ հեռավոր գալակտիկաներ են:

Ընդհանրապես, այսօրինակ սենսացիաների պատճառները, թերեւս, ավելի սոցիոլոգիական բնույթի են, դրանց համար պարարտ հող են, ասենք, գլոբալ աղետների վերաբերյալ հոլիվուդյան ֆիլմերը, դրան գումարած՝ միտումնավոր շահույթ քաղելու եւ այդ կարգի նպատակներ, որոնց համար օգտագործվում է նաեւ ինտերնետը:

- Այսպիսի սենսացիոն լուրերը հրապարակելուց առաջ, արդյո՞ք մասնագիտական կարծիքի անհրաժեշտություն չկա: Ինչպե՞ս են նման լուրերին վերաբերվում Արեւմուտքի կարեւոր լրատվամիջոցները:

- Ձեր հարցը արդեն պարունակում է պատասխանը: Իրոք, Արեւմուտքի ամեն հեղինակավոր լրատվամիջոց որեւէ գիտական նորույթ եթեր տալուց առաջ անպայմանորեն խորհրդակցում է մասնագետների հետ՝ հոգալով հենց լրատվամիջոցի վարկի մասին: Օրինակ, վերջերս ինձ կապվեց Sky and Telescope (ԱՄՆ)՝ աշխարհում ամենալայն տարածում ունեցող աստղագիտական հանրամատչելի ամսագրի խմբագիրը՝ խորհրդակցելու համար ստացված նյութերից մեկի մասին: Եվ այդօրինակ խնդրանքներն առօրյա են:

Միաժամանակ, հասարակությանը գիտական նորույթները, խոշոր նախագծերը մատուցելը Արեւմուտքում համարվում է չափազանց կարեւոր, քանի որ բացի դրա ակնհայտ կրթական նշանակությունից, քաղաքացին, ասել է թե հարկատուն, պետք է իրազեկ լինի, թե ինչ նպատակով են ծախսվում պետական միջոցները:

Սակայն, կրկնում եմ, ինչպես գիտական ամսագրերում հոդվածները խստագույնս գրախոսվում են արդյունքների կարեւորությունը պարզելու համար, այնպես էլ լրատվամիջոցներում մասնագիտական «գրաքննությունը» անհրաժեշտ է առնվազն գիտական արդյունքը հակագիտությունից տարբերելու, հետեւաբար, հասարակությանը անհեթեթ «հայտնագործություններից» զերծ պահելու համար:

Հարցազրույցը՝

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆԻ

Աղազա ոստիկանը ինչո՞ւ նետվեց 5-րդ հարկից

Հունվարի 19-ին, ժամը 09.35-ին ՀՀ ոստիկանության ակադեմիայի ուսումնական մասնաշենքի 5-րդ հարկի լսարանի պատուհանից ցած է նետվել 1-ին կուրսի ուսանող, 17-ամյա Վիլիկ Գրիգորյանը: Ակադեմիայի ուսանողը ընթացիկ ստուգարքները բարեհաջող էր հանձնել, առաջին քննությունից ստացել է լավ գնահատական եւ ըստ ակադեմիայի ղեկավարության եւ դասախոսների, որեւէ հոգեկան շեղում չի նկատվել նրա վարքագծում: Վիլիկ Գրիգորյանին դեպքի վայրից շտապօգնության մեքենայով տեղափոխել են «Արմենիա» բժշկական կենտրոն: ՀՀ ոստիկանության պետի հրամանով նշանակվել է ծառայողական քննություն:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 1/20/2010 10:09 PM Page 1

ԱԶԳ

Մեկնաբան

Նիկոլին՝ 7 տարի, Տեր-Պետրոսյանին՝ ոչ մի

Ի՞նչ տեսք ունի Նիկոլ Փաշինյանի՝ 7 տարով դատապարտումը կողից. անգամ եթե այդ դատավարությունը քաղաքական ենթատեքստ ունի, Հայաստանում ընդունված գործելակերպի սովորական դրսևորում է՝ դատապարտվում են սլաքավարները, իսկ ղեկավարն ու կազմակերպիչը վայելում են ազատությունը: Եթե մի պահ հետ նայենք՝ 2008 թվականի մինչմարտիմեկյան եւ բուն մարտիմեկյան դեպքերին, ապա կարելի է հիշել մի բան, որ ընդդիմության գործողությունների պատասխանատուն նախ եւ առաջ Լեւոն Տեր-Պետրոսյանն է: Նա էր տաքացնում զանգվածին, նա էր հրահանգում՝ «հաղթել ենք, մի փչ էլ հանրահավաքով ճնշեք՝ սրանք հրաժարական են տալու ու գնան»: Ու թեեւ նրա քաղաքական փորձառությունը, ինչն իսկապես պակասում է «Շեֆի» հրահանգները պարզապես կատարող Նիկոլին, թույլ էր տալիս հասկանալ, որ իր ընտրազանգվածին գրգռելն ու «հաթաթա» տալը ոչ մի տեղ չեն տանում, քանի որ ուզած իշխանություն (այդ թվում՝ իր իշխանությունը 1996 թվականին) բոլոր լծակներն ունի պաշտպանելու իր իշխանությունը եւ գրգռված հանրահավաքայիններին, թեկուզ ամենակոշտ միջոցները, իրենց սահմաններին մեջ պահելու, այնուամենայնիվ շարունակում էր մարդկանց մղել տարաբնույթ գործողությունների, մանավանդ որ որպես նախկին նախագահ չէր կարող ժամ առ ժամ տեղեկացված չլինել: Հենց թեկուզ ուժային կառույցներում իր ժամանակներից մնացած իր հավատարիմներից կիմանար ողջ ժամանակացույցը: Ստացվում է, որ նա իր ընտրազանգվածին գիտակցաբար հրահրեց ոչ օրինական գործողությունների, այսպես ասենք, ու այդ բոլորից հետո նա ազատ շրջում է, նրա հանդեպ որեւէ դատական գործընթաց չկա, իսկ նրա սովորական սլաքավարներից (լավ, կիսակայարանի պետը) մեկն, ահա, միտինգ անելու եւ բարձրախոսով խոսելու համար դատապարտվեց 7 տարվա ազատազրկման: Ես չեմ հավատում, որ Հայաստանում դատարանները կարող են ինքնագլուխ այսպիսի որոշում կայացնել՝ «իրավական հարթություն, անկախ դատարան» եւ նման բնորոշումները նրանց համար են, ովքեր հիմքից չգիտեն երկրի կարգն ու դրվածքը: Իսկ եթե սա քաղաքական որոշման արդյունք է, ապա սա ոչնիգլուխ սխալ որոշում է, որովհետեւ արդեն մարած ընդդիմադիրների համար պայքարի նոր «ճակատ» է բացում նախ, երկրորդ՝ խփելու է երկրի իմիջին, քանի որ կօգտագործվի միջազգային ասյաններում ընդդեմ Հայաստանի. ի վերջո դատապարտվածը լրագրող է եւ թերթի խմբագիր, սա երբեք էլ երկրորդական չէ, երրորդ, փաստորեն իր քաղաքական գործունեության պատճառով է դատվել, մանավանդ՝ չորրորդ, նրանից մարտի 1-ին նախորդող իրադարձություններում հարյուր անգամ ավելի շատ դերակատար եղած Տեր-Պետրոսյանն այսօր ազատ շրջում է. սա ինչ կրկնակի, կասեինք՝ եռակի սանդարտ է, եւ մարմնի ո՞ր մասով է որոշում կայացրել որոշում կայացնողը: Եթե դա նրա համար է, որ վախեցնեն շրջանակների մեջ չմտնող լրագրողներին, դա չի աշխատելու, համենայն դեպս՝ մեր լրագրողական շրջանակում, այստեղ վաղուց իրական լրագրությունը ոչ դեր, ոչ ազդեցություն ունի՝ մի շարք լրագրողներ հայհոյում, իրենց լրատվամիջոցներից ամեն տեսակ կոչեր են անում, զրպարտում եւ վիրավորում են, բայց ոչ մի պատիժ չեն կրում, քանի որ պատվիրատու ու տեր ունեն: Անգամ հատուկ պատվերով «քիլերություն» անող լրագրողներ կան, եւ այդ մասին վկայում էր ինքը, Գալուստ Սահակյանը, որ հենց երեկ ասում էր, թե յուրաքանչյուր լրագրող, նայած ո՞ր գործչի հետ է փոխհարաբերությունները լավ, ըստ դրա էլ գրում է, ընդ որում՝ մեր կողմից ավելացնենք, որ պատվերով (անշահ կամ շահախնդիր) վարկաբեկում եւ «սիրս տրաքելու» կամ «մահացության» են հասցնում «իր» գործչին «թշնամի» գործիչներին, իսկ Գալուստ Սահակյանի կողմից էլ նախ մեղադրենք հենց իշխանություններին եւ հասարակությանը՝ այսպիսի լրատվական մշակույթ ձեւավորելու համար: Իսկ պատվերով հայհոյող կամ զրպարտող լրագրողներն անպատիժ «վայելում» են ազատությունը, քանի դեռ ողջ իշխանության դեմ չեն խոսել, իսկ Նիկոլ Փաշինյանը, որի հայացքները բնավ չեմ կիսում, ոչ միայն գրել, այլեւ բարձրախոսով է նկարագրել իր զգացմունքները հանդեպ իշխանությունը, ստացվում է՝ դրա համար 7 տարի նստելու է: Այս է: Նմանությունն այն է, որ մյուս տեսակի լրագրողների եւ տերերին, եւ իրենց ոչինչ չի սպառնում, իսկ Փաշինյանի դեպքում տերը, հրահանգավորողն ու ամեն ինչի բուն ոգեշնչողն ազատ է, իսկ Փաշինյանը՝ նստած: Այդքանից հետո ո՞նց կարելի է մտածել, որ Հայաստանը ճնշումների չի ենթարկվի լրագրող դատելու համար, ես զարմանում եմ: Լավ էլ կենթարկվի, ճնշումների ենթարկելու համար, էն էլ այսքան մարտահրավեր ունենալու մաքալին, ճնշման ենթարկելու բոլոր միջոցներն էլ լավ են, մանավանդ որ երբ Գ. Սահակյանն ասում է «անարդարացի ոնձգություններ լրագրողների դեմ», սա ենթադրում է, որ արդարացի ոնձգություններ էլ կան, եւ Նիկոլին 7 տարի նստեցնելը դրանցից մեկն է:



Իսկ եթե այդ դատավճռն ընդդիմադիրներին անպայման պատժելու, բայց գլխավոր պատասխանատուներին ձեռքը հասցնել չկարողանալու արդյունքում է, եւ Նիկոլին նստեցնելը հարմար է համարվել այն բանի համար, որ այդքիսով կարելի է չափի բերել ե՛ւ լրագրողներին, ե՛ւ նրա վերադաս դեռեւս թքրտացող ՀԱԿ-ականներին, ապա ասենք, որ այս որոշում կայացնողների խորհրդատուները չարաչար սխալվել են՝ թյուրիմացության մեջ գցելով նաեւ որոշում կայացնողին: Տեր ունեցող լրագրողներին բազմիցս փրկել եւ փրկելու են իրենց «պապաները», սա հանրահայտ է, իսկ ՀԱԿ-ականները նոր թեմա ստացան իրենց «մարգարիտները շաղ տալու» համար, Ն. Փաշինյանի էլ՝ բոլոր դատական ասյաններով բողոքարկելու խոստումը արմատական ընդդիմության մեռած մարմինը հոգեդարձ անելու լրացուցիչ խթան կդառնա: Մնում է, որ կոլոմբիեների զեկույցում հայտնվի նաեւ «քաղաքական ենթատեքստով դատապարտված լրագրող» ձեւակերպումը: Մինչդեռ ոչ ոք չէր խանգարում, եւ այժմ չի խանգարում իշխանություններին՝ ճիշտ քաղաքական որոշում կայացնել: Իսկ գուցե խանգարո՞ւմ է:

Սարգսյան-Ալիեւ հերթական հանդիպմանը սպասելիս

1-ին էջից

Այնուամենայնիվ, դեռեւս մի քանի օր առաջ տարածաշրջանում գտնվող ու Երեւան եւ Ստեփանակերտ այցելած ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ **Ռոբերտ Բրադկեն** Լեռնային Ղարաբաղում նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպմանը նշել էր, թե Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումը կարող է կայանալ այս շաբաթ: «Ես տարածաշրջան եմ եկել, որպեսզի նախապատրաստեմ նախագահներ Սարգսյանի եւ Ալիեւի հանդիպումը, որը տեղի կունենա այս շաբաթ», Ստեփանակերտում հայտարարել էր ամերիկացի համանախագահը, որի խոսքերը, սակայն, որեւէ այլ հավաստում դեռ չեն ստացել:

«Ինչ վերաբերում է հանդիպմանը իմ պատրաստվելուն, ես շատ կարեւոր համարեցի գալ Ղարաբաղ նրա ղեկավարության եւ ժողովրդի կարծիքը լսելու նպատակով, եւ շատ ուրախ եմ որ այստեղ եմ», հայտարարել էր Ռոբերտ Բրադկեն ԼՂՀ-ում:

«Միացյալ Նահանգները հաստատակամորեն տրամադրված է ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ առաջընթացի հասնել: Ես ուզում եմ ձեզ վստահեցնել, որ այս տարի ԱՄՆ-ը ողջ ուժերը կներդնի, որպեսզի Ղարաբաղի ժողովուրդը ապագայում ապրի խաղաղ պայմաններում, զարգանա ու լավ կյանք ունենա», ասել էր Բրադկեն:

Ամերիկացի համանախագահը չէր մոռացել, սովորույթի համաձայն, շեշտել, թե հակամարտության կարգավորման ուժային տարբերակը բացարձակապես անընդունելի է: Նշենք, որ թեեւ համանախագահը, ինչպես նաեւ Մինսկի խմբի մյուս համանախագահները բազմիցս նշել են այդ մասին, Ադրբեջանը շարունակում է սպառնալիքներով հագեցած հայտարարություններ անել:

Նախորդ տարի զարկ տված ինտենսիվ հանդիպումները կարծես թե հավակնում են նույն շարունակությունն ունենալու, ամեն դեպքում, առերեւույթ տպավորությունն այնպիսին է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումների հաճախակիությունը պահպանելու ցանկություն ու մտադրություն կա: Սակայն հուսանք, որ հայ-թուրքական հարաբերությունների «կոծկած» բանակցությունների արդյունքի նման ղարաբաղյան հարցում էլ մի օր չեն հայտարարի, թե ինչ-որ բան են պայմանավորվել:

Ա. Հ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

Հայկական աղբյուրների «անջուր» կեցվածքը

Մինչեւ ե՞րբ պիտի կարեւորի մասին տեղեկանանք թուրքից ու ադրբեջանցուց

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հետ: Եվ, ինչպես մեզանում հաճախ է պատահում կարեւոր իրադարձությունների ու նաեւ այլոց առնչվող հարցերի պարագայում, այդ մասին Հայաստանում ծանոթանում ենք թուրքական աղբյուրներից, մասնավորապես, տեղեկացմամբ, թե Թուրքիայի ԱԳՆ մամուլի քարտուղար Բուրաք Օզուգերգինը նշել է, որ Հայաստանի արտգործնախարարը զանգահարել է Թուրքիայի իր գործընկերոջը եւ հայտնել իր անհանգստությունը Թուրքիայի ԱԳՆ-ի հրապարակած հայտարարության կապակցությամբ:

Ըստ թուրքական աղբյուրների, Դավութօղլուն հայտնել է, որ Հայաստանի Սահմանադրական դատարանի հունվարի 12-ին ընդունած որոշման մեջ կան անընդունելի նախապայմաններ, ըստ էության կրկնելով հունվարի 18-ի ԱԳՆ-ի հայտարարությունը: Դավութօղլուն հայտնել է նաեւ, որ Թուրքիան հավատարիմ է ստորագրված արձանագրությունների որոնման եւ նույն վճռականությունն է ակնկալում նաեւ հայկական կողմից:

Ըստ Դավութօղլուի, արձանագրությունների ստորագրումից անմիջապես հետո թուրք հասարակության մեջ սկսվել են իրազեկման աշխատանքներ եւ արձանագրությունները ներկայացվել են խորհրդարան, իսկ հայկական կողմը դեռ խորհրդարան չի ներկայացրել:

Թուրքիայի ԱԳՆ-ն հունվարի 18-ին հայտարարություն էր տարածել, թե Հայաստանի ՍԴ-ի հայ-թուրքական Արձանագրությունների սահմանադրականության մասին որոշումը հակասում է Արձանագրությունների որոնման եւ բովանդակությանը, եւ անընդունելի նախապայմաններ է պարունակում:

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն՝ ի պատասխան, «Հայլուր»-ի միջոցով հայտնել էր, որ մտադիր է զանգել Ահմեդ Դավութօղլուին իր տարակուսանքը հայտնելու եւ պարզելու, թե ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման մեջ թուրքական կողմը որտեղ է տեսել նախապայմաններ, եւ ինչով է այն հակասում Արձանագրությունների հիմնարար նպատակին: «Հուսով եմ, որ նման հայտարարությամբ թուրքական կողմը չի փորձում արդարացնել իր կողմից նախապայմաններ առաջադրելու շարունակական փորձերը եւ խոչընդոտել Արձանագրությունների վավերացման գործընթացի անհարկի ձգձգումը», ասել էր Նալբանդյանը:

Թերեւս հարկ է շնորհակալ լինել, որ Նալբանդյանի՝ Դավութօղլուին զանգահարելու մտադրության մասին տեղեկացել ենք «Հայլուրից», սակայն, այնուամենայնիվ, այդպես էլ դեպքերի զգալի մասի պարագայում դժվար է հասկանալ, թե ինչո՞ւ են հիմնական տեղեկությունները գալիս դրսից:

Եվ սա չի վերաբերում միայն արտգործնախարարությանը կամ հայ-թուրքական հարաբերություններին, չնայած լիուլի վերաբերում է դարաբաղյան հարցին ու կարգավորման բանակցություններին: Մասնավորապես, գրեթե միշտ հայասանյան հասարակությունն ու առավել եւս մամուլը Հայաստանի եւ Ադրբեջանի նախարարների, նաեւ նախագահների հանդիպումների, դրանց հավանական ու հաստատված ամսաթվերի մասին ավելի հաճախ տեղեկանում է ադրբեջանական, թուրքական կամ էլ չգիտեմ որ երկրի լրատվամիջոցների հաղորդագրություններից, սակայն ոչ հայրենական չինովնիկներից ու գերատեսչություններից:

Ավելին, անգամ երբ տեղեկությունը որեւէ կերպ հայտնվել է լրատվամիջոցների ու հանրության ուշադրության կենտրոնում, հայասանյան իշխանական դաշտի ինստիտուտները ոչ հերքում են, ոչ անդրադառնում են, ոչ համաձայնում են. լռում են: Բայց տվյալ դեպքում լռությունը անհեթեթ է ստացվում, անիմաստ, անտեղի: Ու դեռ երբ հարմար է, չինովնիկական տարբեր մակարդակներում հենց լրատվամիջոցներին մեղադրում են, թե ավելի հաճախ օգտվում են ադրբեջանական կամ թուրքական աղբյուրներից: Է՞, որ հայկական աղբյուրներից «ջուր» չի գալիս, ի՞նչ անի լրատվամիջոցը:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Այդ փաստաթղթում կան Թուրքիայի համար անընդունելի...»

1-ին էջից

Հեռախոսազրույցի ընթացքում Դավութօղլուն ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման առնչությամբ իր մտահոգություններն է հայտնել Հայաստանի արտգործնախարարին, ասել է, որ այդ որոշումը թուրքական կողմի համար միանգամայն անընդունելի նախապայմաններ է պարունակում, իսկ դրա մեկնաբանությունները սահմանափակում են գործընթացը:

Դավութօղլուն միաժամանակ ուշադրություն է հրավիրել կառուցողական այն մոտեցմանը, որը Թուրքիան դրսեւորել է ինչպես բանակցությունների ընթացքում, այնպես էլ արձանագրությունների ստորագրումից հետո, ընդգծել է, որ «նույն վճռականությունն ու բարի կամքի դրսեւորումը ակնկալում է» Հայաստանի կառավարությունից:

Սահմանադրական դատարանի որոշմանը նախ Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Ռիադում, ապա Ջեդդայում արձագանքել է նաեւ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Նա Ռիադում, ըստ թուրքական հանրայինի, որոշման առնչությամբ ասել է. «Այստեղ առկա է Թուրքիայի համար բացարձակապես անընդունելի մոտեցում: Դա պետք է ուղղվի»:

Էրդողանը միաժամանակ ընդգծել է «Ադրբեջանի տարածքներն օկուպացումից ազատելու» անհրաժեշտությունը: Իսկ Ջեդդայում «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությանը գլխավոր քարտուղարի հետ հանդիպումից հետո կազմակերպված մամուլի ասուլիսում վարչապետ Էրդողանը նշել է, որ Հայաստանի Սահմանադրական դատարանն անուղղակի ակնարկում է այն փաստաթղթերի մասին, որոնք 1915-ի իրադարձությունները որակում են որպես ցեղասպանություն, դա լուրջ սխալ է, եթե այդ սխալը չշրջվի, ապա կմթագնի հայ-թուրքական նորմալացման գործընթացը:

Վարչապետ Էրդողանն այնուհետեւ շարունակել է. «Հայաստանի Սահմանադրական դատարանի ընդունած փաստաթղթում բառերի, նախադասությունների արանքում թաքնված են գաղտնածածուկ մոտեցումներ, որոնք անընդունելի են Թուրքիայի համար: Մենք առանց որեւէ հաշվարկի խորհրդարան ենք ներկայացրել Արձանագրությունների տեքստը: Այս տեքստի առնչությամբ չենք դիմել որեւէ կառույցի միջնորդությանը: Նախադասությունները վիրահատության ենք ենթարկել: Մենք ցույց ենք տվել մեր անկեղծությունն Արձանագրությունների հարցում եւ առաջ ենք (հայկական կողմից) անցել»:

Թուրքիայի վարչապետը Ջեդդայում եւս ընդգծել է, որ զրկված են Հայաստանի հետ նորմալացման գործընթացից Ադրբեջանին օտարելու շեղությունից, եւ ինքը դա փոխանցել է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Ռուսաստանի նախագահներին, ասելով. «Որպես Մինսկի խմբի համանախագահող երկրներ արդյունքի հանգեցրեք (ղարաբաղյան հակամարտության կարգավորման) այս գործը: Եթե դա անեք, ապա կտեսնեք, թե որքան արագ են բարելավվում Թուրքիա-Հայաստան հարաբերությունները: Սակայն նախ պետք է օկուպացումից ազատել Ադրբեջանի տարածքները»:

AZG NEW PDF.qxd 1/20/2010 10:11 PM Page 1

Առանց պարտադրանքի հասարակական շահի ընկալումն անհնար է

2009-ին երկու հարցում արշանագրվեցին գիտակցության փոփոխություններ

Հասարակական շահի գիտակցումը Հայաստանում այնքան հիասթափեցնող մակարդակի վրա է, որ սխալված չենք լինի, եթե ասենք, որ բնակչության գերակշիռ մեծամասնության մեջ գրեթե բացակայում է: Այս աննախանձելի իրավիճակին առիթ ունեցել ենք անդրադառնալու մոտ մեկ տարի առաջ («Հասարակությունն ընդդեմ հասարակական շահի», «**Ազգ**», **4 փետրվարի, 2009 թ.**): Անշուշտ, մեկ տարվա ընթացքում այս հարցում հնարավոր չէ արմատական փոփոխություններ ակնկալել եւ սպասել, որ կարծրատիպ դարձած հոգեբանությունից ու մտածելակերպից մարդիկ հրաժարվեն: Դրա համար տարիներ եւ անգամ տասնյակ տարիներ ու սերունդների փոփոխություն են անհրաժեշտ: Ուրեմն ո՞րն է ելքը, ինչպե՞ս լուծենք մեր պետության առջեւ այժմ ծառացած բազում կենսական հարցերը:

Հասարակության կողմից հասարակական շահի գիտակցման արմատավորման միակ ճանապարհը ներկայումս պարտադրանքն է՝ օրենքի պարտադրանքը բոլորի նկատմամբ: Ցավոք, այլ ճանապարհով հասարակական հնչեղություն ունեցող որեւէ խնդիր կարգավորել անհնար է: Դրա համար նախ եւ առաջ անհրաժեշտ է իշխանությունների քաղաքական կամքը: Այդ դեպքում որեւէ ձեռնարկ ավելի հաջողությամբ է իրականացվում: Իսկ եթե իշխանությունների նախաձեռնածը միայն հերթական քայլ է լինում, ապա ոչ միայն հեշտությամբ տապալվում է եւ մոռացվում, այլեւ խորացնում հասարակական անտարբերությունն ու անվստահությունը օգտակար ձեռնարկի նկատմամբ: Խոսենք օրինակներով:

Երբ անցյալ տարվա ամռանը կառավարությունը հայտարարեց ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարության եւ գործողությունների հնգամյա պլանի մասին, որն ավելի շատ շաղկապվեց ամրագոտիները կապելու հարցի հետ, շատերը, սովորության համաձայն, թերահավատությամբ վերաբերվեցին դրան եւ հերթական անցողիկ միջոցառում համարեցին: Այդ մոտեցումը, սակայն, սկսեց փոխվել, երբ երեւաց, որ դա ոչ թե հերթական միջոցառում է, այլ կոնկրետ քաղաքականություն: Ընդ որում, հակառակ նրան, որ այդ քաղաքականությունն ուղղված է մարդկանց անվտանգության ապահովմանը, հենց այդ նույն մարդիկ սկսեցին դժգոհել դրանից: Հետեւաբար, այլ ելք, քան պարտադրանքը, օրենքի պարտադրանքը, չէր մնում այդ հարցի կարգավորման համար:

Եվ հասարակական ընկալման մեջ սկսեցին ամրապնդվել ե՛ւ ամրագոտիներ կապելու անհրաժեշտությունը, ե՛ւ փողոցը հատող հետիոտնին զիջելը, ե՛ւ հետիոտնի կողմից փողոցը անցումներից հատելուն վարժվելը: Սրանք փաստեր են, որ դեռ մեկ տարի առաջ դժվար էր երեւակայել, թե Երեւանում հնարավոր կլինեն կյանքի կոչել: Սակայն կառավարության քաղաքական կամքի եւ օրենքի պարտադրանքի կիրառման շնորհիվ ավանդույթը սկսեց ձեւավորվել: Արմատական փոփոխությունը մարդկանց գիտակցության մեջ կատարվեց, եւ հասարակական շահն այս հարցում, շատերի համար ակամա, դարձավ գերակայող:

Անցյալ տարին հատկանշական էր եւս մեկ կարեւոր հարցում մարդկանց գիտակցության մեջ կատարված փոփոխությամբ, թեեւ ոչ նույն հաջողությամբ, ինչպես ճանապարհային երթեւեկության խնդրինն էր: Խոսքը հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կտրոնների ձեռքբերման հարցում իրականացվող քաղաքականության մասին է: Այս գործընթացում նույնպես առկա էր պարտադրանքը ՀԴՄ կտրոններ չտրամադրողների նկատմամբ, բայց նաեւ խրախուսանքը դրանք պահանջողների հանդեպ: Վերջիններից շատերի մեջ ձեւավորվեց այն ընկալումը, որ այս ձեւով իրենք մասնակից են դառնում պետության եւ հասարակության համար շատ կարեւոր միջոցառմանը:

Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ ՀԴՄ-ների կտրոնների տրամադրման գործընթացն ավելի պակաս հաջողություն ունեցավ, որովհետեւ, նախ՝ օրենքի պարտադրանքը ՀԴՄ կտրոններ չտրամադրող տնտեսվարողների նկատմամբ կառավարության կողմից ավելի թույլ էր, քաղաքական կամքը՝ ոչ լիարժեք, ինչի ապացույց էր նաեւ 4-րդ եռամսյակում սպառողներին բոնուսների տրամադրումը կասեցնելու կառավարության որոշումը: Ուստի, հասարակական շահի ընկալումն այս հարցում միայն մասնակի եղավ: Սպառողներից շատերն այդպես էլ շարունակեցին չպահանջել կտրոնները, առեւտրային օբյեկտների մեծամասնությունը կատաղի դիմադրություն ցույց տվեց ՀԴՄ-ների տեղադրմանը եւ կտրոններ տրամադրելուն, կառավարությունն էլ հետեւողական չեղավ նրանց նկատմամբ օրենքը պարտադրելու հարցում: Ուրախալին այստեղ այն է, որ գործընթացն անշրջելի է եւ գոնե խոշոր առեւտրի օբյեկտներում՝ սուպերմարկետներում ՀԴՄ-ների կտրոնները տրամադրվում են, իսկ մարդիկ, կամա թե ակամա, դրանք վերցնում են: Մնում է, որ կառավարությունն այս հարցում այս տարի հետեւողական լինի:

Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ անգամ մշտապես դժգոհ եւ կարգուկանոնին անսովոր մեր ժողովրդի մեջ հնարավոր է գիտակցության փոփոխություն կատարել, ինչի ապացույցը վերոնշյալ երկու գործընթացներն են: Եթե այլ ոլորտներում նույնպես ունենանք նման օրինակներ, ապա հասարակական շահի առաջնայնության ընկալմանը կարող ենք հասնել շատ ավելի շուտ, առանց տասնամյակներ տեւող սերնդափոխությանը սպասելու:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կիսագրագիտության վնասները... բժշկական կենտրոններում

Հունվարյան անձրեւները զարմանքի հետ հիվանդություններն էլ են ակտիվացնում: Շատերը եղանակի տատանումների հետ են կապում տարբեր՝ մասնավորապես սիրտ-անոթային բնույթի հիվանդությունների սրման երեւույթը: Ազգաբնակչության զգալի մի հատված առաջին բուժօգնություն փորձում է ստանալ պոլիկլինիկաներից՝ դիմելով տեղամասային բժիշկներին: Ու վա՜յ նրանց: Նրանց, իրոք, կարելի է կարեկցել՝ ոչ միայն հիվանդության, այլեւ սպիտակխալաթավորներին ճարահատ դիմելու համար: Եվ հենց նրանք, որ մասնագիտության բերումով պարտավոր են լինել ուշադիր ու հնարավորինս սիրալիր, ճիշտ հակառակն են՝ անտաբեր, անհոգի: Հիվանդներին առողջապահական այս կիսաս-պռաս հիմնարկներում՝ որակյալ մասնագետների շատ քիչ բացառություններով, կիսաս-պռաս գրագիտությամբ, սպասում է ոչ միայն շատ դեպքերում նախապատերազմական մակարդակների բուժսարքերի ու մեթոդների առկայություն՝ հաճախ անբարեկարգ, խղճուկ կաբինետներում, նաեւ վերոնշյալ՝ ոչ միայն անտաբեր ու անփույթ, նույնիսկ կոպիտ վերաբերմունք, ինչը շատ հաճախ սկսվում է այցելուի դեմքին՝ բժշկի, անգամ հայացք իսկ չնետելու անկիրթ պահվածքից:

Վերջին օրերին բախտ ունեցա ծանոթանալու Երեւանի կենտրոնական մասերում տեղակայված երկու պոլիկլինիկաների աշխատելաոճին՝ ստի շրջանում առաջացած անհանգստություններիս պատճառով: Դրանցից մեկը, որ շուրջ 18.000 հիվանդ է սպասարկում եւ քաղաքի ամենահին բուժական հիմնարկներից է, ունի ինչպես որակյալ մասնագետներ եւ ժամանակակից պահանջներին համապատասխան սարքավորումներ, բնականաբար, նաեւ թույլ մասնագետներ եւ հնացած, այլեւս անպիտան ապարատներ:

Ջարմանալին այն է, որ հազարավոր մարդիկ տարիներ շարունակ սպասարկվում են, բժշկի ասելով 40-ականների, արդեն դեղնած ու իր ժամանակն ապրած էլեկտրոկարդիոգրամմա անող մի այնպիսի սարքով, որ կարող է ուզածդ պահի խափանվել, աշխատանքը դադարեցնել, եւ հիվանդը այնքան պիտի սպասի, մինչեւ ինժեներ-մեխանիկը հայտնվի եւ ինչ-որ բան անի կամ պարզապես առանց սուգման հեռանա: Նման պարագայում կասկածից վեր է թեկուզ վերանորոգումից հետո նման սարքի արձանագրության հանդեպ որեւէ հիվանդի անվստահությունը: Գիտատեխնիկական այսօրվա առաջընթացի պայմաններում նման մակարդակը խղճահարություն՛ւն, միայն խղճահարությո՛ւն է հարուցում: Սակայն անսարք սարքը շատ ավելի տանելի է դառնում, երբ հանդիպում ես մարդկային հոգու անսարք վիճակների:

Այս երեւույթին հանդիպեցի երկու օր անց՝ դիմելով տեղամասային պոլիկլինիկա՝ տարեց բարեկամուհուս խորհրդով: Եվ մեկ անգամ եւս համոզվեցի, որ պոլիկլինիկաներ այցելելը ժամավաճառություն է, եւ վտանգավոր՝ առողջության համար: (Առանձին բացառություններ, իհարկե, կան, երբ ծանոթ մեկը միջնորդում է հազվադեպորեն այս բուժարաններում հայտնված որակյալ մասնագետների մոտ այցելության համար): Երեւանի թիվ 8-րդ պոլիկլինիկան տեղակայված է քաղաքի գլխավոր փողոցներից մեկում՝ Բաղրամյան 51ա հասցեում: Մեկ-երկու բժշկի սպասարկման մակարդակով, երեւույթն, իհարկե, ընդհանրացնելը սխալ է, սակայն անցած ուրբաթ օրվա դեպքը շրջանցել չեմ կարող՝ մասնագիտական խիղճս նաեւ թույլ չի տալիս (ոչ թե իմ, այլ մյուս հիվանդների հանդեպ): երիտասարդ բժշկուհին հիվանդաթերթիկը լրացնելուց հետո առաջարկեց անցնել էլեկտրոկարդիոգրամմայի կաբինետ: Բուժքույրը պատասխանեց, թե աշխատանքն ավարտված է. ըստ դռան թղթի գրության դեռ 15-20 րոպե առջեւում կար: Երբ հիշեցրի նրան, կոշտ պատասխանեց, թե դեռ 3 հիվանդ ունի ընդունելու: Սակայն խնդիրն այդ 15-20 րոպեն կամ աշխատանքային ժամի ավարտը չէր (ժամը 13:00), այլ նրա կոպիտ, անկիրթ տոնը:

Շրջվեցի, դիմացի նստարանին մի խումբ հիվանդներ կային նստած, տարիքով մի կին՝ ձեռնափայտով, ցավի դրոշմը դեմքին, տարեց ամուսիններ. կինը գանգատվում էր, թե բժշկուհին լսելով ստի մասին գանգատները, նույնիսկ արյան ճնշումը չառաջարկեց չափել եւ առհասարակ, ասում էր նա, երբեք չի զննում եւ ուշադրություն չի դարձնում գանգատներին, միայն ինչ-որ բաներ է լրացնում թղթերի վրա (այսքանն է երեւի սովորել բժշկական համալսարանում, ինչ կարող ես անել): ԷԿԳ կաբինետից դուրս եկած պատկառելի տարիքի տղամարդու այլայլված դեմքն ավելի քան խոսուն էր. Երեւանի հիվանդանոցներից մեկի բազմամյա նախկին պրոֆեսորը, վիրաբույժը, խոսքեր չէր գտնում վիրավորանքից. «Բայց նա չգիտի, ո՞վ է դիմացինը եւ ինչպե՞ս խոսում, ի՞նչ տոնով, մի՞թե նույնը չէր կարելի ասել բարեկիրթ ձեւով»: Տասնյակ տարիներ իր աշխատանքին, հիվանդներին պատասխանատու մոտեցումով պրոֆեսորը վիրավորանքից կարկամած էր:

Հենափայտով կնոջը, որը վերջերս ինսուլտ էր տարել ու ողջ գիշերը աչք չէր փակել ցավերից, բուժաշխատողը խորհուրդ էր տվել դիմել շտապբուժօգնության ծառայություն, քանի որ իր աշխատանքային ժամն ու նաեւ շաբաթն ավարտված է, իսկ հաջորդ հերթափոխի (ժ. 13:00-17:00) արձակուրդում գտնվող բժիշկը ե՞րբ կվերադառնա հարցին, հիվանդների երեսին դուռն անտարբերությամբ փակող բուժաշխատողը, հայացք անգամ չդարձնելով, մատնացույց արեց հիմնարկի՝ երեւի ադմինիստրատիվ մասը:

Ակնհայտ իրողություն է, որ պոլիկլինիկայի տնօրենությունը, հաշվի առնելով այս օրերին սիրտանոթային հիվանդությունների ակտիվացման հանգամանքը, արձակուրդում գտնվող բժշկին պետք է փոխարինող նշանակեր, կամ երկարաձգեր նախորդի աշխատանքային ժամանակի տեւողությունը: Սակայն սա բնավ կապ չունի բուժաշխատողների վերաբերմունքի, հիվանդին պատասխանելու անբարեկիրթ պահվածքի հետ:

Կյանքում ամեն նման միջադեպ ավելի է հուսահատեցնում առանց այդ էլ մանվող թելի պես բարակող մեր կյանքը: Այսպիսի մտածողությամբ, վերաբերմունքով ու հոգեբանությամբ մենք նվազագույնի ենք հասցնում մեր երեխաների՝ այս երկրում ապագան տեսնելու հնարավորությունը: Կարծում եմ՝ մարդկային այս անտարբերությունը մասնագիտական անպատասխանատվությունն ու անհետեւողականությունը, ոչ պրոֆեսիոնալիզմը, որ համատարած է դարձել, վերածելու են մեր երկիրը անդեմ ու անհասցե անորոշ տարածքի:

Իսկ բժշկական բուհերում այն սովորողները, որոնք մասնագիտական կրթություն ստանալ չեն կարողանում, մարդկային հարաբերությունների՝ էթիկայով սահմանված նորմերին հետեւել, գոնե, պարտավոր են: Եվ պարտավոր են դա կիրառել իրենց աշխատանքային պրակտիկայում՝ որեւէ հիվանդի հետ հարաբերություններում՝ սոցիալական որեւէ դիրքի, հասարակական որեւէ ապարեզի պատկանելության: Սա նախ եւ առաջ նրանց մասնագիտական կոչման առաջին անհրաժեշտ պայմանն ու պահանջն է:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Հ. Գ. Հոդվածը տպագրվելուց առաջ պարզվեց, որ այս նույն պոլիկլինիկայի նույն ծառայությունից՝ օգտվող, մեկ այլ բժշկի մոտ այցելող մեր թերթի աշխատակցուհիներից մեկը ճիշտ հակառակ տպավորություն ու կարծիք ունի: Եվ սա միանգամայն նորմալ երեւույթ է. աշխատանքային վայրը չէ, որ որոշում է մասնագիտական կամ մարդկային որակները:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բաց դռների օր՝ ՀԱՀ-ում

Հայաստանի ամերիկյան համալսարանի առաջիկա շաբաթ օրվա՝ հունվարի 23-ի (ժամը 11:00-14:00) ավանդական դարձած «Բաց դռների օր» միջոցառումը այցելուներին հնարավորություն կտա մանրամասն ծանոթանալ ներհամալսարանական գործունեությանը եւ ուսումնական ծրագրերին, որոնք տարեցտարի ընդլայնվում, զարգացում են ապրում: ՀԱՀ-ը համագործակցում է ԱՄՆ Կալիֆոռնիայի համալսարանի հետ եւ հավատարմագրված է ԱՄՆ դպրոցների եւ քոլեջների արեւմտյան ասոցիացիայի կողմից:

Շաբաթ օրվա հանդիպումները հնարավորություն կընձեռեն ծանոթանալու համալսարանի դասախոսական կազմի, ուսանողների, ղեկավար պաշտոն զբաղեցնող շրջանավարտների հետ, տեղեկանալու ՀԱՀ-ում ակադեմիական աստիճան չստացող ուսանողի կարգավիճակին, նաեւ իրազեկվելու ՀԱՀ-ի ուսանողներին տրամադրվող մինչեւ 90 տոկոս ֆինանսական օժանդակությանը, փոխառությանը եւ կրթաթոշակներին:

Հայաստանի ամերիկյան համալսարանում գործում է մագիստրոսի կոչում շնորհող 7 ծրագիր՝ արդյունաբերական ճարտարագիտություն եւ համակարգերի կառավարում, համակարգչի եւ տեղեկության գիտություն, գործարար կառավարում, հանրային առողջապահություն, իրավագիտություն, քաղաքագիտություն եւ միջազգային հարաբերություններ, անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդում: Այցելուները կծանոթանան նաեւ անգլերեն լեզվի, GRE եւ GMAT քննություններին նախապատրաստող դասընթացներին: Այս մասին տեղեկացնում է ՀԱՀ ուսանողական եւ ուսումնական հարցերի գրասենյակը:

Մ. Բ.

AZG NEW PDF.qxd 1/20/2010 10:12 PM Page 1

Նախիջեւանի տերը Ղարաբաղ էլ է ուզում

«**Ազգ**»-ը վերջին համարներում անդրադարձել է Նախիջեւանի Բենանյար գյուղում տեղի ունեցող իրադարձություններին: Այնտեղ մարդիկ աղօրինի կալանավորվում են, սպանվում, ենթարկվում զանազան բռնություններ, նույնիսկ ինքնահրկիզվում: Եվ այս ամենը «աշխարհի ամենաժողովրդավար պետություն՝ Նախիջեւանում»: Մենք տեղեկացրել էինք նաեւ, որ Բենանյարի մոտ կանգնած ոստիկանական «բանակը» չի թույլատրել օտարազգի դիվանագետներին՝ մտնել գյուղ: Այսօր իրավիճակը մնում է լարված: Հիշեցնենք, որ Բաքվում Նախիջեւանի ինքնավար հանրապետության ներկայացուցիչ Հասան Հաջիեւը հայտարարել էր, թե «ինչ-որ մեկը ուզում է կարծիք ստեղծել, թե Նախիջեւանում իրավիճակը լարված է, սակայն այդ ամենը դասարկ խոսակցություններ են», իր այս խոսքերը Հաջիեւը ուղղել էր միջազգային հանրությանը (Բաքուն շաս է սիրում առհասարակ խոսքեր ուղղել միջազգային հանրությանը - Հ. Ա.), ի դեմս Ադրբեջանում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցչի, որը հաստատել էր Նախիջեւանի իրական պատկերը:

Ադրբեջանական լրատվամիջոցները շարունակում են պարբերաբար անդրադառնալ նախիջեւանյան իրականությանը: «Ազադլիգ»-ը նշում է, որ մինչեւ այսօր գյուղի բոլոր խանութներն ու հասարակական օբյեկտները փակ են: Մարդիկ, ձերբակալումներից խուսափելու համար տնից դուրս չեն գալիս, նրանք վախենում են դուրս գալ փողոց:

Բենանյարում սննդի հայթայթման խնդիրներ են առաջացել, մարդիկ սովի են մատնվում, գյուղի խանութները փակ են, իսկ գյուղից դուրս գալն արգելված է. ճանապարհը խիստ հսկողության տակ է առնված:

Մինչեւ այսօր, սակայն, ոչ մի ադրբեջանական լրատվամիջոց չի պարզաբանել Նախիջեւանում նման գործողությունների իրական դրդապատճառները: Այնինչ ադրբեջանցի իրավապաշտպան **Նովելլա Զաֆարօղլուն** նշել է, որ Նախիջեւանում խոսքի ազատության իրավիճակը պարզապես սարսափելի է: «Լրագրողների նկատմամբ այնտեղ իրականացվել են եւ իրականացվում են հետապնդումներ ու ֆիզիկական բռնություններ», իր մտահոգություններ է հայտնել Զաֆարօղլուն:

Իսկ ադրբեջանցի գրող **Չինգիզ Հուսեյնովը** «Ազադլիգ»-ին տված հարցազրույցում առհասարակ իր զզվանքն է հայտնել Ադրբեջանում իրականացվող գործընթացներից. «Այս ամենի պատճառը Ադրբեջանում տիրող ռեժիմն է. որն ուղղակի նողկալի է», շեշտել է Հուսեյնովը:

Հետաքրքրական է, օտարազգի դիվանագետների մուտքը արգելելով կամ նրանց խոսքը «դասարկ խոսակցություններ» անվանելո՞վ է Բաքուն ուզում ձեռք բերել նաեւ երկրորդ «ինքնավար հանրապետությունը»՝ Ղարաբաղը, որին վերջերս Ալիեւն անձամբ լայն ինքնավարության խոսք տվեց: Զավեշտն այն է, որ Ադրբեջանն այս վերջինն ուզում է անել հենց այդ նույն միջազգային հանրության միջոցով, իսկ ԱՄՆ-ը, որի դեսպանատան ներկայացուցչի խոսքերը «դասարկ են հնչում» Բաքվում, նախագահողներից է Մինսկի խմբում, որի միջնորդությամբ էլ պետք է լուծվի ղարաբաղյան հակամարտությունը: Նմա՞ն ինքնավարություն են տալու Ղարաբաղին, ինչպիսին Նախիջեւանն ունի, թե՞ նման կերպ են վարվելու ղարաբաղցի այլախոհների հետ, ինչպես նախիջեւանցիների հետ են վարվում: Միջազգային հանրությունը պետք է որ ամեն ինչ տեսնի, իսկ Ղարաբաղին պետք չէ նման ինքնավարությունը, Ղարաբաղին ընդհանրապես ինքնավարություն պետք չէ. նա առանց այն էլ անկախ պետություն է:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

British Airways-ը մեղադրվում է քրիստոնյաների հանդեպ խտրականության մեջ

British Airways ավիաընկերության աշխատակցուհի **Նադյա Էվեյդան** դատական կարգով ընկերությանը ներկայացրել է քրիստոնյաների հանդեպ խտրականություն դրսեւորելու մեղադրանք: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ 2006-ից ի վեր Էվեյդան երկրորդ անգամ է հանդես գալիս նման մեղադրանքով:

«Հիթրոու» օդանավակայանի գրանցման բյուրոյի աշխատակցուհին ընկերության վարչությունից պահանջում է կրոնական խտրականություն ճանաչել BA կորպորատիվ քաղաքականության նախկին նորմերը, որոնք աշխատակիցներին արգելում էին հագուստի վրա կրել զարդեր եւ կրոնական խորհրդանշաններ:

Էվեյդան նաեւ բարոյական եւ նյութական հատուցում է պահանջում 2006-ի իր եռամսյա հարկադիր եւ չվճարված արձակուրդի դիմաց (պատճառը՝ նա հրաժարվել էր հանել կամ թաքցնել Քրիստոսի խաչելության պատկերով փոքրիկ խաչը): 58-ամյա բրիտանուհին իր կրած վնասը գնահատում է 120 հազար ֆունտ ստեռլինգ:

2006-ին Նադյա Էվեյդան խաչը հանելու ղեկավարության պահանջը համարել էր քրիստոնյաների հանդեպ խտրականություն, ասելով, որ աշխատակիցներին չեն արգելում կրել իսլամական գլխաշորեր կամ սիկհական փաթթոցներ: Դա նրա առաջին դատական հայցն էր ավիաընկերության դեմ:

Թեեւ դատավճիռը կայացվել էր BA-ի օգտին, բայց հանրային կարծիքը Էվեյդայի կողմն էր: Բրիտանացի մի շարք նախարարներ բոյկոտել էին British Airways-ը: Էվեյդային անուղղակիորեն պաշտպանել էին վարչապետ Թոնի Բլեռը եւ Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը:

Հասարակայնության ճնշման ներքո ավիաընկերությունը ստիպված թույլատրել էր կրոնական խորհրդանշաններ կրել համազգեստի դարձածալի վրա: Էվեյդային առաջարկել էին վերադառնալ եւ խաչն ազատորեն կրել, բայց՝ ուրիշ պաշտոնում, որն անհնար կդարձներ շփումը մեծ թվով ուղեւորների հետ: Հաստատական բրիտանուհին մերժել էր այդ առաջարկը:

ԱՆԿԱՐԱ

Թուրքիայում ՌԴ դեսպան. «Մոսկվան Երեւանի վրա ճնշում չի գործադրի»

«Թեպետ Ռուսաստանն ու Թուրքիան հաստատում են ավելի սերտ հարաբերություններ եւ տնտեսական կապեր, այնուամենայնիվ երկու երկրների միջեւ զարգացումները բխում են ոչ թե ռազմավարական գործընկերությունից, այլ ընդհանուր շահերից: Էներգետիկ բնագավառում համագործակցության մեջ չկա ոչ մի քաղաքական ենթատեքստ, կամ միայն երկկողմանի տնտեսական շահեր: Ես չեմ հավանում ռազմավարական գործընկերություն եզրը», «Յուրիթե» թերթին ասել է Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Վլադիմիր Իվանովսկին:

Խոսելով հայ-թուրքական հարաբերությունների ու վերջին զարգացումների մասին՝ Իվանովսկին նշել է, որ Ռուսաստանը հենց սկզբ եղել է անկեղծ ու հասկանալի եւ պետական մակարդակով հայտնել իր կարծիքը:

«Այն, ինչի մասին խոսել է Լավրովը, ասել են նաեւ Պուտինն ու Մեդվեդեւը Էրդողանին՝ վերջինիս Մոսկվա կատարած այցելության ժամանակ: Մոսկվան չի պատրաստվում ճնշում գործադրել Երեւանի վրա, որ վերջինս դուրս բերի իր զորամիավորումները Ղարաբաղից: Ինչպես արդեն քաղաքական է թուրքական կողմը, մենք ոչ մեկի կողմը չենք բռնի: Մենք ճնշում չենք գործադրի ոչ մեկի վրա՝ խնդրին լուծում տալու նպատակով: Նման ճնշումները կարող են բացասական հետեւանք ունենալ», հայտարարել է Իվանովսկին:

Հիշեցնենք, որ Երեւան այցելության ժամանակ Ռուսաստանի ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովը ընդգծել էր, որ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման հարցը ճիշտ չէ կապակցել ԼՂ հակամարտության կարգավորմանը: Այս ելույթից մի քանի օր առաջ էլ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ հանդիպման ժամանակ հայտարարել էր, որ երկու գործընթացները չափազանց դժվար են ու կարիք չկա դրանք կապակցելու:

Իվանովսկին Թուրքիայում հայտարարել է, որ նման կարծիք ունեն նաեւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին եւ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման:

Սա վերջին տասնօրյակի ընթացքում Ռուսաստանի կողմից պաշտոնական մակարդակով երրորդ հայտարարությունն էր, որ հայ-թուրքական հարաբերությունները չեն կարող ու չպետք է կապակցվեն Ղարաբաղյան հակամարտությանը:

Հ. Հ.

Հաիթի կուղարկվեն ՄԱԿ-ի զինծառայողներ եւ ոստիկաններ

Երկրաշարժից ավերված Հաիթիում դիակապտություն եւ զանգվածային անկարգություններ թույլ չտալու նպատակով այնտեղ կուղարկվի ՄԱԿ լրացուցիչ զորաբաժին՝ 2000 զինծառայող եւ 1500 ոստիկան: Այդ որոշումը միաձայն ընդունվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, հաղորդում է BBC-ն:

Ներկայումս Հաիթիում արդեն գտնվում են ՄԱԿ-ի 7000 խաղաղարար զինծառայողներ, ինչպես նաեւ ոստիկանական առաքելության 2000 մասնակիցներ: 2004-ի գարնանից նրանք այնտեղ են քաղաքացիական պատերազմի կանխման նպատակով:

Հունվարի 12-ի 7 բալանոց երկրաշարժի զոհերի թիվն արդեն անցել է 75 հազարից: Նրանց մեջ կան ՄԱԿ-ի ներկայացուցչության 20 աշխատակիցներ: Մայրաքաղաք Պորտ օ Պրենսը գրեթե լիովին ավերված է: Հաիթին աշխարհի ամենաաղքատ պետություններից մեկն է: Պարենի, խմելու ջրի պակասը, ինչպես նաեւ երկրաշարժի գործած ավերները դիակապտության եւ կողոպուտների տարածման պատճառ են դարձել: Բնակչությանը մարդասիրական օգնություն են ցույց տալիս ոչ միայն տարբեր երկրներից եկած փրկարարները, այլեւ ամերիկացի 3500 նավաստիներ եւ դեսանտայիններ: Նախատեսվում է ամերիկացի զինծառայողների թիվը հասցնել 10 հազարի:

Հաիթիի ավերված ենթակառույցի վերականգնման նպատակով Եվրոմիությունը կհատկացնի 200 մլն եվրո: ԱՄՆ-ը եւ Համաշխարհային բանկը խոստացել են հատկացնել 100 մլն-ական դոլար:

«Արաբական թերակղզու «Ալ Ղաիդան»»՝ ահաբեկչական կազմակերպությունների ցանկում

ԱՄՆ պետդեպարտամենտը «Արաբական թերակղզու «Ալ Ղաիդա»» խմբավորումն ընդգրկել է օտարերկրյա ահաբեկչական կազմակերպությունների ցանկում: Այդ մասին նշվում է գերատեսչության կայքում հրապարակված մամլո տեղեկագրում:

Ահաբեկիչների ցանկերում ներառվել են խմբավորման առաջնորդներ Նասիր ալ Վահիշին եւ Սաիդ ալ Շիհրին: Այսպիսով, արգելվում է նյութապես օժանդակել եւ զենք մատակարարել բուն կազմակերպությանը եւ դրա անդամներին:

Բացի դրանից, ԱՄՆ արդարադատության նախարարությունը կլիազորվի հետապնդելու «Ալ Ղաիդայի» արաբական մասնաճյուղի կողմնակիցներին, իսկ սահմանափակումների շնորհիվ հնարավոր կդառնա փակել կազմակերպության ֆինանսավորման ուղիները:

Պետդեպարտամենտը ՄԱԿ-ին առաջարկել է պատժամիջոցներ ձեռնարկել «Արաբական թերակղզու «Ալ Ղաիդայի»» եւ դրա առաջնորդների դեմ:

«Ալ Ղաիդայի» արաբական մասնաճյուղը հիմնավորված է Եմենում եւ պատասխանատու է Եմենի, Սաուդյան Արաբիայի, Հարավային Կորեայի եւ ԱՄՆ-ի քաղաքացիների դեմ կատարված մի շարք ահաբեկչությունների համար: Մասնաճյուղի գոյության մասին հայտնի դարձավ 2009-ի սկզբներին:

Է. Քենեդիի տեղը կզբաղեցնի հանրապետական Ս. Բրաունը

Սենատում 50 տարի Մասաչուսեթսի նահանգը ներկայացրած դեմոկրատ Էդվարդ Քենեդիի մահից հետո նրա թափուր տեղը վիճարկում էին դեմոկրատ Մարթա Կոուկլին եւ հանրապետական Սքոթ Բրաունը: Երեկ կայացած նահանգային ընտրությունների քվեների ամփոփումից հետո պարզվել է, որ Բրաունը ստացել է 52 տոկոս, Կոուկլին՝ 47 տոկոս: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Բրաունը Հանրապետական կուսակցության 41-րդ ներկայացուցիչը կդառնա Կոնգրեսի վերին պալատում, որտեղ դեմոկրատները անցյալ տարվա 60-ի փոխարեն այսուհետեւ կունենան 59 սենատոր: Այսպիսով, դեմոկրատները Սենատում կորցնում են «որակական առավելությունը», ինչը նրանց թույլ էր տալիս որոշ օրինագծեր անցկացնել առանց լուրջ ընդդիմության: Այժմ Բրաունի ընտրության շնորհիվ հանրապետական սենատորները հնարավորություն են ստանում շրջափակելու մի շարք օրինագծեր, որոնք վերաբերում են մասնավորապես նախագահ Բարաք Օբամայի առաջարկած առողջապահության բարեփոխմանը:

Դեռ մի քանի օր առաջ դեմոկրատների թեկնածու, Մասաչուսեթսի գլխավոր դատախազ Մարթա Կոուկլիի հաղթանակը գրեթե կասկած չէր հարուցում, բայց հետո պարզվեց, որ Սքոթ Բրաունը լուրջ մրցակից է: Քվեարկության նախօրեին Օբաման հանդես էր եկել դեմոկրատ թեկնածուի պաշտպանությամբ, սակայն նախագահի միջամտությունը չէր նպաստել նրա հաղթանակին:

AZG NEW PDF.qxd 1/20/2010 10:10 PM Page 1

ԱԶԳ

Մշակույթ

Մշակույթի մեծավաստակ գործիչը

Սամսոն Գասպարյան-100

Տեսադարձ հայացք գցելով կյանքիս անցած ճանապարհին եւ տարբեր առիթներով հանրաքեսության մշակույթի նախարարություն այցելելիս, աչքիս առաջ են գալիս այնպիսի եզակի դեմքեր, որոնք ոչ միայն իմ սերնդի կյանքում, այլեւ մեր ժողովրդի գիտալուսավորչական, մշակութային, հրատարակչական, երաժշտության պատմության եւ տեսության մեջ իրենց համեստ եւ լուսավոր հետքերն են թողել: Անդրանիկ Շահինյան, Սամսոն Գասպարյան, Եղիշե Հովհաննիսյան, Գուրգեն Բորյան, Հակոբ Խանջյան, Ռոբերտ Խաչատրյան, Կամո Ուղումյան... Նրանք բոլորն էլ անցյալ դարի 60-70-ական թվականներին ՀԽՍՀ Կուլտուրայի (այսօր՝ Մշակույթի) նախարարությունում եղել են մինիստր, մինիստրի տեղակալ կամ վարչության պետ: Նրանցից չկա մեկը, որ գիտամշակութային որեւէ գրքի կամ գիտապատմական որեւէ աշխատության հեղինակ չլիներ: Եվ ինչ նուրբ, բարի, ուրացավ էին նրանք հասկապես երիտասարդների հանդեպ: Աշխատանքի բերումով /Հայպետհրատում խմբագիր, ՀԼԿԵՄ Պատմության պետական թանգարանում տնօրեն աշխատելիս/ հաճախ էի հանդիպում նրանց: Վերջերս ՀՀ Մշակույթի նախարարություն էի գնացել: Հանկարծ նկատեցի Հայկ. ԽՍՀ Արվեստի վաստակավոր գործիչ, Արվեստագիտության թեկնածու Սամսոն Գասպարյանի հեղինակած մի քանի գրքեր Մշակույթի նախարարի տեղակալներից մեկի սեղանին: Հիշեցի, որ 1909թ. նոյեմբերի 25-ը Սամսոն Գասպարյանի ծննդյան օրն է: Արմատներով նա Արեւմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից էր: Կրել էր Հայոց մեծ եղեռնի եւ գաղթի ողջ դառնությունը. Իգդիրում զրկվել էր Գյուլխանում մորից, հետո՝ քարտաշ, որմնադիր հորից՝ Գասպարից: Մինիստրության հրատարակչության վարչության պետ, Մեծ հայրենականի մասնակից Եղիշե Հովհաննիսյանի հետ հաճախ էինք այցելում Սամսոն Գասպարյանին: Հաճախ էինք նրա աշխատասենյակում հանդիպում Հաջե Ջընդիյին եւ Ջասըմէ Ջալիլին: Պիտի խոստովանել, որ Սամսոն Գասպարյանը թե՛ որպես երաժշտագետ, քրդագետ, թե՛ որպես պետական, մշակութային, գիտալուսավորչական գործիչ մեծ հեղինակություն էր վայելում: Ինչպես իր սերնդակիցներից շատերը նա էլ էր ընկել Ծաղկաձորի որբանոց եւ Ալեքսոլի ամերիկյան պոլիգոն: Լենինականի (Գյումրվա) մանկավարժական տեխնիկումն ու երաժշտական ստուդիան ավարտելուց հետո հին բայազետցի Սամսոնը Երեւանի Պետական կոնսերվատորիայի ուսանող էր դարձել: Ոչ միայն երաժշտություն էր հորինում, այլ գրում էր բանաստեղծություններ: Հայերեն եւ քրդերեն էր թարգմանել ԽՍՀՄ-ի հիմնի տեքստը՝ Էժեն Պոտիեի «Ինտերնացիոնալը»:

Սամսոն Գասպարյանը ակտիվորեն մասնակցել էր Հայաստանում կոնսերվատորիայի երաժշտագիտական եւ տեսական վերելքին, աչքի ընկել նաեւ իր կազմակերպչական ձիրքով:

1932թ. երիտասարդ հայորդին արդեն Հայաստանում նոր կազմավորվող Կոմպոզիտորների միության պատասխանատու քարտուղարն էր, չնայած դեռ կոնսերվատորիայի երաժշտական-մանկավարժական բաժնի ուսանող էր: «Գործնականում վերակառուցել երաժշտական ֆրոնտը» (1932 թ.), «Կարո Զաքարյան» (1933 թ.), «Կոմպոզիտոր Դանիել Ղազարյան», «Գեղարվեստի աշխատողները չպետք է մոռանան իրենց աշխատողներին» (1934 թ.), «Պետական կոնսերվատորիայի ստեղծագործական դասարանը» (1935 թ.) հոդվածները, այնուհետեւ գիտության թեկնածու, փառահեղ գիտեր ոչ միայն գյուղն ու քաղաքը, այլեւ աջակցելյակ էր հանրապետությունում գործող մշակույթի բոլոր ճյուղերին, գրադարաններին, կուլտուր-լուսավորչական հիմնարկներին: Մեծ էր նրա կարեւորը սփյուռքում գործող ոչ միայն մշակույթի, այլեւ գիտության եւ գրական գործիչների հետ:

Հարազատ Սամսոն Գասպարյանի «Հայ կոմպոզիտորները Հայրենական մեծ պատերազմում» աշխատությունը: Այն կազմել եւ խմբագրել էր ինքը, լույս էր ընծայել Հայպետհրատը 1944թ.:

Ազատ Մանուկյանին, Շարա Տալյանին, Քրիստափոր Քուրշարյանին, Նիկողայոս Տիգրանյանին, Հարո Ստեփանյանին եւ այլ երախտավորներին նվիրված նրա հրապարակումները, որոնք տպագրվել են «Խորհրդային արվեստ» ամսագրում եւ այլուր, ապացուցում են, որ երաժշտական նոր աշխարհ էր ստեղծել ոչ միայն մի շնորհաշատ ստեղծագործող, մանկավարժ եւ հայրենասեր հայորդի, այլեւ օրավուր ծաղկող բազմաշնորհ մի երիտասարդ:

Մեր հետագա շփումներից ես իմացա, որ ՀՀ Մշակույթի մեր մինիստրի տեղակալը մենագրություններ է նվիրել մեծն Կոմիտասին (1947 թ.), Ալ. Սպենդիարյանին (1951 թ.), Հայկանուշ Դանիելյանին (1958 թ.), լույս է ընծայել «Երաժշտական քրեստոմատիա» ժողովածուն, երաժշտության տեսության, պատմության, խմբերգային արվեստի մասին իր առաջադեմ խոսքն ասել եւ զորավիգ եղել ժամանակի ոչ միայն երիտասարդ կոմպոզիտորներին, այլեւ երգիչներին եւ երգչախմբերին: Թերթիր անցյալ դարի «Կուլտուր-լուսավորչական աշխատանք», «Սովետական Հայաստան», «Սովետական գրականություն եւ արվեստ», «Պատմաբանասիրական հանդես» եւ այլ թերթեր ու պարբերականներ, նրանցում տպագրված Սամսոն Գասպարյանի հոդվածների կյանքաճանաչողությունից, արվեստագիտությունից եւ հայանվիրումից անգամ երեւում է, որ ժողովրդական երգն ու երաժշտությունը, ազգային օպերան եւ գեղագիտական դաստիարակության խնդիրները, հասարակական եւ պետական գործիչ հայորդու կյանքի առաջնորդիչ ուժերն են եղել: Նա Հայկ. ԽՍՀ Արվեստի վաստակավոր գործիչ էր, արվեստագիտության թեկնածու, փառահեղ գիտեր ոչ միայն գյուղն ու քաղաքը, այլեւ աջակցելյակ էր հանրապետությունում գործող մշակույթի բոլոր ճյուղերին, գրադարաններին, կուլտուր-լուսավորչական հիմնարկներին: Մեծ էր նրա կարեւորը սփյուռքում գործող ոչ միայն մշակույթի, այլեւ գիտության եւ գրական գործիչների հետ:

Հարազատ Սամսոն Գասպարյանի «Հայ կոմպոզիտորները Հայրենական մեծ պատերազմում» աշխատությունը: Այն կազմել եւ խմբագրել էր ինքը, լույս էր ընծայել Հայպետհրատը 1944թ.:

Որպես հայոց բազմադարյան երաժշտության ուխտանվիրյալ Սամսոն Գասպարյանը ոչ միայն մայր հայրենիքում, այլեւ արտերկրներում եւ Սփյուռքում, Չայկովսկու, Մոցարտի, Շոպենի, Շուբերտի, Բեթհովենի երաժշտությանը զուգահեռ Կոմիտաս եւ Արամ Խաչատրյան է հնչեցրել, Առնո Բաբաջանյան եւ Էդուարդ Միրզոյան, Ալեքսանդր Հարությունյան եւ ինչո՞ չէ նաեւ Գուսան Աշոտ եւ Գուսան Շահեն: Քանի՜ քանի՜ գրական-երաժշտական, կուլտուր-լուսավորչական միջոցառումների են մասնակցել հայաստանյան երգիչ-երգչուհիները, կոմպոզիտորներն ու դիրիժորները՝ Հայաստանից դուրս Սամսոն Գասպարյանի ղեկավարությամբ: Հայկանուշ Դանիելյան, թե՛ Գոհար Գասպարյան, Տաթեւիկ Սազանդարյան թե՛ Սուսաննա Գալիկյան, Աշոտ Սաթյան, թե՛ քրդական կամ մի այլ ազգի ստեր ջերմացնող մի երգ, մեղեդի, ռապսոդիա որտե՞ղ եւ ե՞րբ չի հնչել, երբ հյուրախաղերի են եղել մեծավաստակ Սամսոն Գասպարյանի ղեկավարությամբ:

Վերջերս մեր մշակույթի բազմավաստակ եւ համեստ այս երախտավորը 100 տարեկան դարձավ: Ճիշտ է, նա կյանքից ֆիզիկապես հեռացավ 1974 թ. հուլիսի 11-ին, բայց մինչ օրս էլ շարունակում է մնալ իր ժողովրդի խորհրդային շրջանի սիրված մշակութային երախտավորների համաստեղության լուսատուներից մեկը: Հիշենք նաեւ, որ Սամսոն Գասպարի Գասպարյանը իր երաժշտական գիտելիքներն էլ ավելի է որակավորել Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիայում: 1940թ. նա ընտրվել է Երեւանի քաղաքային սովետի գործկոմի նախագահի տեղակալ, որոշ ժամանակ աշխատել է Երեւանի Գ. Սունդուկյանի անվան Դրամատիկական թատրոնի տնօրեն, Հայաստանի Կոմպոզիտորների միության պատասխանատու քարտուղար, ԳԱ Երաժշտաթատերական թանգարանի տնօրեն: Կոմունիստ հայորդին 1947 թ. նշանակվել է ՀԽՍՀ Կինեմատոգրաֆիայի մինիստր, իսկ 1954 թ. մինչ իր մահը (11.07.1974 թ.) եղել է ՀԽՍՀ Մշակույթի փոխնախարար, պարգեւատրվել է «Կարմիր աստղի» եւ «Պատվո շքանշան» շքանշաններով:

Եկե՛ք Մեծերին մեծավարի գնահատենք, խոնարհվե՛նք նրանց վաստակի եւ հիշատակի առջեւ:

ՍԱՄՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

«Դեպի խորքը լեռան» գրքի շնորհանդեսը ԳԱԱ պատմության ինստիտուտում

Երեկ կեսօրին հայ մտավորականներն այցելեցին Կոմիտասի անվան այգում գտնվող պանթեոն եւ հարգանքի տուրք մատուցեցին հայ մեծանուն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հիշատակին: Քիչ անց շիրիմը ողողվեց ծաղիկներով ու խնկարկվեց գրողի անմահ հիշատակը: Այդ օրը տոնական էր, քանզի լրանում էր Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 91-ամյակը, ցավոք առանց նրա: Օրը տոնական էին դարձրել Կապուտիկյանի գրչընկերները, գրականագետները, նրա երկրպագուները, որոնք հավաքվել էին ԳԱ ակադեմիայի պատմության ինստիտուտում, մասնակցելու «Դեպի խորքը լեռան» հոդվածների ժողովածուի շնորհանդեսին:

Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործությանը, գրական-հասարակական գործունեությանը նվիրված հրապարակումներն առանձին ժողովածուով հրատարակելու գաղափարը ծնվել է բանաստեղծուհու ծննդյան 90-ամյակին նվիրված հանդիսությունների օրերին: Եվ ահա, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ֆինանսական աջակցությամբ, Մեսրոպ արք. Աշճեան մատենաշարի 49-րդը նվիրվեց Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 90-ամյակին, ու այն կրեց «Դեպի խորքը լեռան» անվանումը: Այդ վերնագիրը ընտրվել է բանաստեղծուհու համանուն գրքի վերնագրից, նշեց բ. գ. թ. Գայանե Հակոբյանը. «Քանզի Կապուտիկյանը հայ գրականության լեռներից մեկն է, իսկ նրան նվիրված գրականագիտական հոդվածներն ու դիմանկարային ակնարկները՝ այդ լեռան խորքերը թափանցելու, Կապուտիկյան բանաստեղծի, Կապուտիկյան երեւույթի էությունը բացահայտելու, նրա տեղն ու դերը մեր գրական, հասարակական կյանքում արժեւորելու փորձեր են»:

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր Աշոտ Մելքոնյանը, ԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, քաղաքական մեկնաբան Ռաֆիկ Հովհաննիսյանը եւ ուրիշները ջերմ ու անկեղծ խոսքերով ներկայացրեցին ամենայն հայոց բանաստեղծուհուն, որի թողած ժառանգությունը համարվում է այն եզակիներից, քանզի հենց ինքը, գրողն իր կենդանության օրոք մեկիկ-մեկիկ հավաքել է բոլոր այն նյութերը, հոդվածները, ուղերձները, որոնք տարիների ընթացքում նվիրել են իրեն: Եվ ահա այսօր այդ բոլոր արժեքավոր նյութերն ամփոփվել են մեկ ժողովածուի մեջ ու դարձել կապուտիկյանագիտության հավաքածու:

Շնորհանդեսին Կապուտիկյանի ստեղծագործությունների ասմունքով հանդես եկավ Գայանե Սամվելյանը, իսկ բանաստեղծուհու տեքստերի վրա գրված երգով՝ Կարեն Միրզոյանը: Ցուցադրվեց նաեւ 15-րոպեանոց տեսաֆիլմ, որտեղ հնչում էր Կապուտիկյանի խոսքը, նրա ավանդը հայ ժողովրդին:



Ժողովածուն սկսվում է Պարույր Սեւակի բնութագրությամբ, Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» վերտառությամբ, ու մանրակրկիտ վերլուծություններով, գրված 1961 թվականին: Սեւակը նշել է. «Սիլվա Կապուտիկյանը մեկն էր այն սակավաթիվ հայ գրողներից, ովքեր դափնեկիրը դարձան մի մրցանակաբաշխության, որը ժամանակին բարձրագույնն էր համարվում»: Ժողովածուում տեղ են գտել Երվանդ Ազատյանի, Լեւոն Հախվերդյանի, Շահան Շահնուրի, Մարտիրոս Սարյանի, Համո Սահյանի, Հրանտ Թամրազյանի եւ շուրջ վեց տասնյակ անվանի գրողների, գրականագետների, քննադատների տարբեր տարիներին գրած հոդվածները, նամակները, ուղերձները եւ նաեւ հուշերը: Իհարկե, այդ ամենը խնամքով պահպանվում են Կապուտիկյանի տուն-թանգարանում, որոնք էլ մասնակցել են ժողովածուի հրատարակմանը: 310 էջանոց արժեքավոր ժողովածուն տպագրվել է 400 օրինակով եւ այն կտրամադրվի գրադարաններին, թանգարանին: Իսկ շնորհանդեսի բոլոր մասնակիցները միջոցառումից հետո արժանացան գրքի մեկ օրինակն ունենալու պատվին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԳՈՒՅԺ

Վախճանվել է արվեստի ճանաչված գիտակ դոկտ. Կարապետ Բելյանը

Տրոյայի (Միչիգան) Բոմոն հիվանդանոցում վախճանվել է արվեստի ճանաչված գիտակ, արվեստի գործերի հավաքորդ, դոկտ. Կարապետ Բելյանը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի դեկտեմբերի 26-ի համարը: Երեք տարի առաջ նա հրաշքով էր փրկվել մի ավտովթարից, որի հետեւանքով հինգ ամիս ստիպված էր եղել անշարժ պառկած մնալ անկողնում:

Դոկտ. Բելյանը (բուն ազգանունը՝ Բեհեսնելյան) ծնվել էր Երուսաղեմում, Կիլիկիայից մազապուրծ ծնողների ընտանիքում: Ուներ չորս քույր՝ Մարի, Պերճուհի, Վիքի եւ Արտեմիս անուններով: 1948-ին պաղեստինյան պատերազմի բռնկումով, ընտանիքը ստիպված է եղել տեղափոխվել Բեյրութ, որտեղ Կարապետը հաճախել է Սեն Ժոզեֆ ֆրանսիական համալսարանի ատամնաբուժական ֆակուլտետը, իր ուսման համար դրամական միջոցներ վաստակելով երաժշտական մի խմբում ջութակ նվագելով: Այնուհետեւ նա տեղափոխվել է Ամման եւ դրանից հետո ԱՄՆ, որտեղ պրոֆեսիոնալ մակարդակի է հասցրել իր երաժշտական գիտելիքները Ուեյն պետհամալսարանից 1975-ից սանալով մագիստրոսի աստիճան:

Նա նաեւ արվեստի գործերի (քանդակներ, նկարներ եւ ձեռքի այլ աշխատանքներ) սիրահար էր եւ ուներ հսկայական մի հավաքածու՝ սկսած հին եգիպտական, հունական եւ հռոմեական շրջանից մինչեւ ժամանակակից եւ ավանգարդ ժանրերը: «Ազգ» դեռ առիթ կունենա անդրադառնալու նրա գործունեությանը:

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 1/20/2010 10:54 PM Page 1

ԱԶԳ **Մարզական**

Զգալի փոփոխություններ «Գանձասարում»

Արթուր Քոչարյանը վերադարձավ Կապան

Անցած մրցաշրջանում Կապանի «Գանձասար» անկայուն ելույթներ ունեցավ: Թիմն առաջնությունը սկսեց 5 անընդմեջ պարտությամբ: Արդեն մեկնարկում պաշտոնական արվեց թիմի գլխավոր մարզիչ Սամվել Պետրոսյանը, մի քանի ֆուտբոլիստներ ազատվեցին ակումբից: Միայն Սլավա Գաբրիելյանի որդի հաջողվեց

փիչ թե շաս կայունացնել թիմի խաղը: Սակայն մեկնարկում կորցրած միավորների պատճառով կապանցիներին չհաջողվեց պահպանել 2008-ին նվաճած բրոնզե մեդալները: «Գանձասարը» 2009-ի առաջնությունն ավարտեց 5-րդ տեղում:

Անցյալի սխալները չկրկնելու համար «Գանձասարը» լրջորեն է նախապատրաստվում նոր մրցաշրջանին: Մարզումները սկսվել են դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերի 11-ից: Հունվարի 15-ից թիմն ուսումնամարզական հավաք է անցկացնում Ծաղկաձորում: 12-օրյա հավաքի ընթացքում մեծ ուշադրություն կդարձվի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստվածությանը:

Թիմի գլխավոր մարզիչ Սլավա Գաբրիելյանն ու ակումբի ղեկավարությունը սելեկցիոն լուրջ աշխատանք են ծավալել «Գանձասարի» կազմը համալրելու համար: Թիմի գլխավոր ձեռքբերումն առաջնության լավագույն ռմբարկու Արթուր Քոչարյանի վերադարձն է: Այս տեղափոխությունը կարելի է համարել Հայաստանի տրանսֆերային շուկայի գլխավոր իրադարձությունն այս պահին: Քոչարյանն անցած մրցաշրջանում իրեն հիանալի դրսեւորեց «Ուլիսում»՝ 15 գնդակով ճանաչվելով առաջնության լավագույն ռմբարկուն: Քոչարյանի պայմանագրի ժամկետն «Ուլիսի» հետ ավարտվել էր: Ինչպես երեւում է, կողմերը համաձայնության չեն եկել նոր պայմանագրի շուրջը, ուստի Քոչարյանը վերադարձել է Կապան: Նա «Գանձասարում» հանդես է եկել 2006 եւ 2007-ին: Երկու մրցաշրջաններում էլ Արթուրը դարձել էր թիմի լավագույն ռմբարկուն՝ խփելով համապատասխանաբար 15 եւ 8 գնդակ: Քոչարյանը 23 գնդակով «Գանձասարի» բոլոր տարիների լավագույն ռմբարկուն է: Անցած տարի նա դարձավ նաեւ «Ուլիսի» բոլոր տարիների լավագույն ռմբարկուն՝ երկու տարում թիմում խփելով 18 գնդակ:

Այժմ «Գանձասարում» հարձակողական հեսաֆրֆրական երկյակ է ստեղծվել հանձինս 37-ամյա Արսեն Ավետիսյանի եւ 36-ամյա Արթուր Քոչարյանի: Հիշեցնենք, որ անցյալ տարի Արսեն Ավետիսյանն էլ աչքի էր ընկել բարձր արդյունավետությամբ՝ խփելով 14 գնդակ:

Եթե հարձակման գծի հարցը կարելի է լուծված համարել, ապա թիմին այս պահին անհրաժեշտ են կենտրոնական պաշտպան եւ հենակետային կիսապաշտպան: Ներկայումս «Գանձասարում» փորձաշրջան են անցնում դարպասապահ Նիկոլայ Սարգսյանը, նախկին արարատցիներ Սեմյոն Մուրադյանն ու Արա Հովհաննիսյանը, մեծ ֆուտբոլին անցած տարի հրաժեշտ տված Աշոտ Գրիգորյանը: Առայժմ անորոշ է Վիրգին Մարշավելայի հետագա ճակատագիրը: Մարզիչները մտադիր են ուսումնամարզական հավաքի ժամանակ փորձարկել 5 օտարերկրացիների:

Լեգեոնականներից «Գանձասարից» հեռացել են Կոբա Խանիշվիլին ու Զազա Սախոկիան, իսկ «Կռիլյա Սովետովում» փորձաշրջանից հետո Դավիթ Խանիշվիլին վերադարձել է Կապան: Վալերի Ալեքսանյանը տեղափոխվել է «Ուլիս», իսկ Միխեիլ Սիմոնյանը մարզվում է «Իմպուլսում»: Առայժմ վնասվածքների պատճառով մարզումներին չեն մասնակցում Արտաշես Անտոնյանն ու Աղվան Հայրապետյանը: Այս տարի «Գանձասարում» հանդես կգան «Բանանցի» նախկին ֆուտբոլիստներ Արտակ Օսեյանն ու Հովհաննես Գրիգորյանը: Փետրվարին «Գանձասար» ուսումնամարզական հավաք կանցկացնի արտերկրում, այնուհետեւ կմասնակցի Աշգաբադում կայանալիք «Թուրքմենբաշիի գավաթի» մրցաշարին:

Սիմոնյանին անհասկանալի է «Փյունիկի» մոտեցումը

Մոսկվայում ընթացող ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» խաղարկությունը մասնագետներից շատերն անհետաքրքրական են համարում: Մասնավորապես, մոլդովական «Դաչիայի» խորհրդատու մարզիչ Իգոր Դոբրովոլսկին հայտարարել է, որ եթե այս իրավիճակը շարունակվի, ապա մրցաշարը հետագա տարիներին կարող է եւ տեղի չունենալ: Ըստ Դոբրովոլսկու, նախ պետք է խստացվեն պահանջները մասնակիցների նկատմամբ, որպեսզի նրանք ժամանեն իրենց ուժեղագույն կազմերով: Իսկ դրա համար անհրաժեշտ է զգալիորեն ավելացնել մրցանակային հիմնադրամը:

Մրցումների կազմակերպման կոմիտեի նախագահ Սերգեյ Կուլիկովը նշել է, որ մրցաշարի հետագա ճակատագրի հարցը քննարկվում է ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդաժողովում: Միաժամանակ նա կասկած է հայտնել, թե կփոխվեն մրցաշարի անցկացման ժամկետները կամ էլ վայրը:

Իր տեսակետն է հայտնել նաեւ ներկայումս Ռուսաստանի ֆուտբոլային միության նախագահի պաշտոնակատար Նիկիտա Սիմոնյանը. «Մենք արդեն 18-րդ մրցաշարն ենք անցկացնում: Դա լավ պատասխան է հոռետեսներին: Իհարկե, ժամանակները փոխվում են ու շատ թիմեր մրցաշարին ներկայանում են իրենց երիտասարդական կազմերով՝ նպատակ ունենալով փորձարկել ֆուտբոլիստներին: Միակ թիմը, որ զարմացրեց իր մոտեցմամբ, «Փյունիկն» է: Հասկանալի չէ, մրցաշարին ներկայացել է հայկակա՞ն, թե՞ աֆրիկյան ակումբ: Այդ հարցը մենք կքննարկենք Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության հետ: Առավել եւս, որ «Միկան» պատրաստ էր Մոսկվա ժամանել ուժեղագույն կազմով: Իսկ հանդիպումներն անցնում են բավական աշխույժ մրցակցությունում ու ավելի հետաքրքրական պայքարում, քան ասենք Աֆրիկայի գավաթի խաղարկությունում: Իհարկե, մրցաշարի մրցակարգը կփոփոխվի: Այդ հարցերը քննարկվում են նաեւ ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդաժողովում: Արդեն հաջորդ տարվա մրցաշարի համար ԱՊՀ-ի բյուջեում 1 մլն դոլար է հատկացվել: «Համագործակցության գավաթի» խաղարկության համար մենք կպայքարենք»:

Թուրքերը Հիդինգին 6 մլն եվրո են առաջարկում

Թուրքիայի ֆուտբոլի ֆեդերացիան նոր առաջարկ է արել Գուս Հիդինգին: Ազգային հավաքականը գլխավորելու համար հոլանդացի մարզչին առաջարկվել է տարեկան 6 մլն եվրո աշխատավարձ: Երբ ընտրական մրցաշարի ավարտից հետո Ֆաթիհ Թերիմը հեռացավ Թուրքիայի հավաքականից, իսկ ՌԴ հավաքականը պարտվեց անցումային մրցախաղում, թուրքերը Հիդինգին առաջարկեցին 2 մլն եվրոյով գլխավորել հավաքականը: Բնականաբար, Հիդինգը հրաժարվեց:

Հիդինգը հայտարարել էր, որ ոչ մի դեպքում չի գլխավորի այնպիսի հավաքական, որը մասնակցելու է աշխարհի առաջնությանը: Հիշեցնենք, որ թուրքերն աշխարհի առաջնության ուղեգիր չեն նվաճել: Ժամանակին Հիդինգը մարզել է «Ֆեներբահչեն» եւ դրական կարծիքի էր թիմի մասին: Նրան վրդովեցնում էր միայն թուրքական լրատվամիջոցների պահվածքը:

ՇԱԽՄԱՏ

Անհաջողությունները հետապնդում են Հակոբյանին

Շախմատի Վեյք Ան Զեեի մրցաշարում անհաջողությունները շարունակում են հետապնդել Վարուժան Հակոբյանին: 4-րդ տուրում նա մրցաշարում 2-րդ պարտությունը կրեց՝ զիջելով Էրվին Լ'Ամիին: 4 տուրից հետո Հակոբյանը մեկ միավորով նախավերջին՝ 13-րդ տեղում է: Աղյուսակը եզրափակող Դմիտրի Ռեյնդերմանը վաստակել է կես միավոր:

«Բ» խմբի մրցաշարի առաջատարներն են Նի Հուան եւ Անիշ Գիրին, որոնք ունեն 3-ական միավոր: Նրանց միջեւ կայացած պարտիան ավարտվեց ոչ-ոքի: 2,5-ական միավոր են վաստակել Դեյվիդ Հաուելը, Էրվին Լ'Ամին եւ Պենտալա Հարիկրիշնան:

Ուժեղագույնների մրցաշարում իր հաղթարշավը շարունակեց մրցաշարի միանձնյա առաջատար Ալեքսեյ Շիրովը՝ տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակը: Այս անգամ նրա «զոհը» Յան Սմիթսն էր: Արդյունավետ մյուս պարտիան Վասիլի Իվանչուկի եւ Լյուկ վան Վելիի մրցավեճն էր, որում հաղթեց սպիտակներով խաղացող ուկրաինացի գրոսմայստերը:

Առայժմ ոչ մի կերպ չի հաջողվում հաղթանակ տոնել Անանդին եւ Կրամնիկին: Նրանք 4-րդ պարտիան ոչ-ոքի ավարտեցին: Անանդը հաշտություն կնքեց Նակամուրայի հետ, Կրամնիկը միավորը կիսեց Տիվյակովի հետ: Կառլսեն-Շորթ, Կարյակին-Կարուանա, Դոմինգես-Լեկո պարտիաները եւս ավարտվեցին ոչ-ոքի:

4 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով աղյուսակը գլխավորում է Շիրովը: Նակամուրան, Կառլսենն ու Իվանչուկն ունեն 3-ական միավոր: Նրանց 2-ական միավորով հետապնդում են Կարյակինը, Դոմինգեսը, Կրամնիկն ու Անանդը:

«Միկան» մեկնեց Անթալիա

Ըստ նախապես մշակած ծրագրի, «Միկան» մեկնեց Անթալիա, որտեղ մինչեւ փետրվարի 3-ն ուսումնամարզական 2-րդ հավաքը կանցկացնի: Առաջին հավաքը թիմն անցկացրել էր հունվարի 7-17-ը Ծաղկաձորում, որտեղ հիմնական ուշադրությունը դարձվել էր ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստությանը:

Անթալիայում արդեն ավելի մեծ ուշադրություն կդարձվի խաղային որակների կատարելագործմանը: Դրան կնպաստեն նախատեսված ստուգողական հանդիպումները ղազախական «Շիմֆենդի», Տաշքենդի «Պախտակորի» եւ ռումինական «Ինտերնացիոնալի» հետ: Անթալիա են մեկնել «Միկայի» 23 ֆուտբոլիստներ: Թիմին միացել են վնասվածքից ապաքինված բրազիլացի Ջունիոր Էդնիլսոնը, «Փյունիկից» հեռացած Հայկ Չիլինգարյանը, ինչպես նաեւ «Միկա-2-ի» խաղացողներ Հայկ Իշխանյանն ու Ստեփան Գրիգորյանը: «Միկայի» կազմում փորձաշրջան անցնելուց հետո «Կիլիկիա» է վերադարձել այդ թիմի դարպասապահ Արմեն Խաչատրյանը:

«Բանանցում» նոր ֆուտբոլիստներ են փորձարկվում

Ինչպես տեղեկացրել էինք, «Բանանցի» գլխավոր մարզիչ Ստեփցա Կուզմանովսկին մտադիր էր թիմում նոր ֆուտբոլիստներ փորձարկել: Եվ ահա նրանք Երեւանում են ու թիմի կազմում մասնակցում են ուսումնամարզական առաջին հավաքին: «Բանանցում» փորձաշրջան են անցնում բուլղարացի հարձակվող Դանիել Գենովը, բրազիլացիներ, պաշտպան Ռոդրիգո Սիլվան, կիսապաշտպաններ Գուստավո Լոպեսն ու Ալեքսանդր Ֆեռեյրան:

Մինչեւ Անթալիա մեկնելը «Բանանցը» նախատեսել է ստուգողական երկու հանդիպում անցկացնել: Դրանցից առաջինը կկայանա հունվարի 24-ին «Ուլիսի» հետ:

Մրցակիցները հայտնի են

Ինչպես տեղեկացրել ենք, հունիսի 28-ից հուլիսի 3-ը Երեւանում տեղի է ունենալու բասկետբոլի կանանց Եվրոպայի առաջնության «Շ» խմբի մրցաշարը 8 հավաքականների մասնակցությամբ: Մյունխենում կայացած վիճակահանությամբ մասնակից 8 թիմերը նախնական փուլում բաժանվել են 2 ենթախմբի: Առաջինում հանդես կգան Հայաստանի, Ջիբրալթարի, Անդորրայի եւ Մոլդովայի հավաքականները: 2-րդ ենթախմբում ընդգրկվել են Ադրբեջանի, Մալթայի, Շոտլանդիայի եւ Ուելսի ընտրանիները:

Շաքիլ Օ'Նիլն ամենաարդյունավետ բասկետբոլիստների ցանկում է

ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության «Քլիվլենդ» թիմի բասկետբոլիստ Շաքիլ Օ'Նիլը «Տորոնտոյի» հետ խաղում հատեց 28 հազար միավորի սահմանագիծը: Անհրաժեշտ 2 միավորը նա թիմին պարգեւեց առաջին րոպեին: Այդ խաղում անվանի բասկետբոլիստը 16 միավոր վաստակեց՝ նպաստելով «Տորոնտոյի» նկատմամբ թիմի հաղթանակին (108-100):

Մարզական կարիերայում Շաքիլ Օ'Նիլը բասկետբոլի ազգային ընկերակցության առաջնություններում 28 հազար 14 միավոր է վաստակել: Այս ցուցանիշով նա ընդգրկվեց ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության ամենաարդյունավետ բասկետբոլիստների լավագույն հնգյակում: Ցուցակը գլխավորում է Քարիմ Աբդուլ Ջաբարը (38.387 միավոր), որին հաջորդում են Կառլ Մալոունը (36.928), Մայքլ Ջորդանը (32.292) եւ Ուիլտ Չեմբեռլենը (31.419):

Մենամարտը չի կայանա

Մարտի 6-ին նշանակված Դարչինյան-Մարտինես մենամարտը չի կայանա: Այդ մենամարտում Դարչինյանը պետք է պաշտպաներ երկրորդ թեթեւագույն քաշային կարգում WBC-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսները: Մենամարտի չեղյալ համարելու պատճառն այն էր, որ կողմերը համաձայնության չեն եկել Ռաուլ Մարտինեսին հասանելիք հոնորարի հարցում: Այժմ Դարչինյանի պրոմոութեր Գարի Շոուն իր սանի համար նոր մրցակից է փնտրում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 1/20/2010 10:31 PM Page 1

ԱԶԳ Օրվա հետքերով

Ինչո՞ւ է դադարեցված Գյումրու «Orhnu» կենտրոնի գործունեությունը

Գյումրու բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնը («Orhnu» կենտրոն) անցած դեկտեմբերին նշեց գործունեության 2 տարին եւ հանդես եկավ 2009 թ. տարեկան հաշվետվությամբ, իսկ այս ամսի 13-ից նրա գործունեությունը Շիրակի մարզպետի հրամանով դադարեցված է: Կենտրոնի համադասող, միակ հաստիքով աշխատող Գեւորգ Պետրոսյանն աշխատանքից ազատված է, իսկ գույքը մարզպետարանի կողմից հաշվառվել եւ ի պահ է վերցվել:

Երեքշաբթի մի քանի լրագրողների տեղեկացնելով այս մասին, Գեւորգ Պետրոսյանը հայտնեց, որ նման որոշումը պատճառաբանվել է իր հետ կնքված տարեկան պայմանագրի ժամկետը լրանալու հանգամանքով, մինչեւ նոր պայմանագրի կնքումը: Մինչդեռ նույն իրավիճակը եղել է նաեւ անցյալ տարեսկզբին, բայց կենտրոնը շարունակել է բնականոն գործել մինչեւ հարցը լուծվել է, եւ դրանից ոչինչ չի տուժել: Նույնը վերաբերում է նաեւ կառույցի տարեկան ֆինանսավորմանը:

«Orhnu» կենտրոնի հիմնադիրներն են ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը, ՀՀ բնապահպանության նախարարությունը եւ Շիրակի մարզպետարանը: Գյումրու կառույցը սկսել է գործել 2007 թ. դեկտեմբերի 12-ից, հիմնադիրների նույն տարվա մայիսի 16-ին ստորագրած եռակողմ հուշագրի հիման վրա: Սակայն չգիտես ինչու մարզպետը միայնակ որոշում է կայացրել կենտրոնը փակելու մասին: Գուցե դա պայմանավորված է նրանով, որ կառույցի գույքի պատասխանատու մարզպետարանն է: Սակայն, ըստ մեզ տրված տեղեկատվության, մարզպետարանը երկրորդ տարվանից պետք է նաեւ հոգար կենտրոնի էլեկտրաէներգիայի, ջեռուցման եւ ընթացիկ պահպանման ծախսերը, ընդհուպ համադասողի աշխատավարձը, ինչը չի արել՝ խախտելով նշված հուշագրի դրույթները (ֆինանսավորումը շարունակել է կատարել ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը): Իսկ ահա գույքի պատասխանատուի իր իրավունքից միակողմանիորեն օգտվել է՝ ընդհատելով այս հարկավոր եւ ակտիվ գործող կառույցի բազմակողմ աշխատանքը: Ընդհանրապես «Orhnu» կենտրոնների գործունեությունն ուղղված է հասարակության բնապահպանական իրազեկության մակարդակի բարձրացմանը, ոլորտին առնչվող որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության եւ արդարադատության մատչելիության ապահովմանը: Մեր հանրապետությունում լավագույններից մեկը համարվող Գյումրու կենտրոնը ծառայություններ է մատուցում արդեն բավական մեծ թվով այցելուների ու կազմակերպությունների, տարածում է նաեւ էլեկտրոնային բնապահպանական տեղեկատվություն, պարբերաբար իրականացնում կարեւոր հանրային քննարկումներ, ուսուցողական եւ այլ ծրագրեր, նախաձեռնել է խաղաթուղթ բնապահպանական կոալիցիայի ստեղծումն ու գործունեությունը: Ներկա ընդհատումով այս ամբողջ գործընթացը խաթարվել է:

Այսօր մեր հանրապետությունում գործում են 14 «Orhnu» կենտրոններ, որոնք բոլորն էլ տարեսկզբին ունեն եւ պայմանագրի վերակնքման ու ֆինանսավորման ուշացման, եւ այս տարի կարգավիճակի նախատեսվող փոփոխության խնդիր, սակայն, Գյումրու կենտրոնի ղեկավարի հավաստմամբ, մյուսներից ոչ մեկի գործունեությունը ներկա պահին ընդհատված չէ: Ինչ կերպ կարելի է հասկանալ, ուրեմն, Շիրակի մարզպետարանի այս դիրքորոշումը մի խնդրում, որի լուծումը իրենց՝ պաշտոնյաների գործն էր: Ցավոք, մարզպետարանում նույն օրը բաժինների հաշվետվությունների ծարաբեռնված օր էր, որի պատճառով մեզ չհաջողվեց այս եւ նման հարցերի պատասխանները ժամանակին տեղում ստանալ:

Կարծում ենք՝ իրենց խոսքը անհապաղ պետք է ասեն կենտրոնի մյուս երկու հիմնադիրները: Առայժմ նրա աշխատանքը վերսկսելու խնդրանքով մարզպետին ուղղված դիմում է պատրաստել «Orhnu» կենտրոնի փորձագետների խորհուրդը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

REA.am

Տեղեկատվության, գովազդի եւ հայտարարությունների կայք

Բացառիկ հնարավորություն՝ բոլորի համար

Նորաստեղծ www.rea.am (real estate of Armenia) ինտերնետային մասնագիտացված պորտալն իր տեսակի մեջ մի շարք առումներով բացառիկ է Հայաստանում:

1. Կայքն **ունի 4 բաժիններ**՝ անշարժ գույք, շարժական գույք (ավտոմեքենա, կահույք, էլեկտրոնային ապրանքներ եւ այլն), աշխատաշուկա եւ ծառայություններ: Այսինքն, **մեկ մասնագիտացված կայքում կարելի է** տեղադրել եւ ծանոթանալ բոլոր այս 4 ոլորտների առաջարկի ու պահանջարկի մասին մասնավոր անձանց հայտարարություններին եւ կազմակերպությունների գովազդային առաջարկներին:

2. Կայքը **եռալեզու է (հայերեն, ռուսերեն, անգլերեն)** եւ յուրաքանչյուր լեզվի էջն ունի իր առանձնահատկությունները:

3. Ձեր հայտարարություններն ու գովազդը **www.rea.am** կայքում անմիջապես հասանելի են դառնում **ավելի քան 300 հազար ինտերնետից օգտվողների համար Հայաստանում եւ միլիոնավոր ինտերնետից օգտվողների համար ամբողջ աշխարհում:**

4. Յուրաքանչյուրը Հայաստանում կամ **աշխարհի ցանկացած երկրից**, այցելելով www.rea.am ինտերնետային կայք, կստանա իրեն անհրաժեշտ տեղեկությունները մեր երկրում բնակարան գնելու կամ վարձակալելու, ավտոմեքենա վարձույթով վերցնելու, աշխատանքի շուկայի առաջարկի եւ պահանջարկի, տարբեր ծառայությունների եւ այլ առաջարկությունների մասին:

5. Պահանջվող տեղեկությունը հաշվված վայրկյանների ընթացքում գտնելու համար գործում են **որոնման եւ ընդլայնված որոնման հզոր համակարգերը:**

6. Տվյալների բազան անընդհատ **թարմացվում է:**

7. **www.rea.am** կայքի այցելուները կծանոթանան նաեւ բոլոր այս **4 ոլորտների** վերաբերյալ նորություններին, շուկաներում իրավիճակի վերլուծությանը, բազային տվյալներին, գործող ընկերություններին եւ բազմաթիվ այլ տեղեկությունների:

8. Հայտարարությունների եւ գովազդի համար գործում են **ամենացածր գները** Հայաստանում, իսկ երկարաժամկետ հայտարարությունների համար **ամենամեծ զեղչերը:**

Հայտարարություններն ընդունվում են
Մհեր Մկրտչյան փ. 10 հասցեում՝
աշխատանքային օրերին ժամը 10:00-18:00,
շաբաթ-կիրակի օրերին ժամը 12:00-16:00,
ինչպես նաեւ էլեկտրոնային եղանակով edram
համակարգի միջոցով:
Տեղեկությունների համար զանգահարել 56-36-57,
էլեկտրոնային հասցե՝ info@rea.am

ՕԱՆՈՒՅՈՒՄ

Վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվեց 5.50 տոկոս

2010 թ. հունվարի 20-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.50 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.50%:

2009 թ. դեկտեմբերին նոյեմբերի նկատմամբ արձանագրվել է շուրջ 2% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 6.5%՝ գերազանցելով նպատակային միջակայքի վերին սահմանը 1.0 տոկոսային կետով:

ԿԲ խորհուրդը փաստեց, որ համաշխարհային տնտեսության վերականգնման միտումների ներքո արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ճնշումներն ուժգնանում են՝ պայմանավորվելով հանրահումքային եւ հիմնական պարենային ապրանքների միջազգային գների աճի սպասվածից ավելի արագ տեմպերով: Միաժամանակ, ներքին տնտեսական ակտիվության եւ ամբողջական պահանջարկի աստիճանական վերականգնումը եւս շարունակում են ավելացնել ընդհանուր գնաճային ֆոնը:

Խորհուրդը գտնում է, որ գնաճի նշված միտումների շարունակման եւ տնտեսական ակտիվության վերականգնման սպասումների ներքո բարձր գնաճային միջավայրը կպահպանվի նաեւ կանխատեսվող հորիզոնում, որի պայմաններում կարեւորվում է դրամավարկային քաղաքականության աստիճանական կոշտացումը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, տարածքային դրամարկղային կենտրոնների ենթակայանների եւ նրանց սնուցող բարձր լարման մալուխների վթարային ու ընթացիկ սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության նպատակով հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ 2010թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, տարածքային դրամարկղային կենտրոնների ենթակայանների եւ նրանց սնուցող բարձր լարման մալուխների վթարային ու ընթացիկ սպասարկում իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության հարկային եւ սոցիալական ապահովագրության վճարների գծով:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2010թ. փետրվարի 22-ը ժամը 17-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2010թ. փետրվարի 25-ը ժամը 17-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010թ. մարտի 03-ին ժամը 17-00-ին:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Գործերի կառավարչություն հեռ. 59-28-90, ներքին՝ 18-90:

ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն

«Ռիելթոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն իրականացնելու է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից օտարման ներկայացված ստորեւ նշված գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ.մակերեսը 56.6քմ.: Հասցե՝ ք. Արմավիր Բաղրամյան փող. 7, բն. 8: Մեկնարկային գինը՝ 14000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական (գնի նվազեցում) եղանակներով 22.02.2010թ-ից մինչեւ 01.06.2010թ. յուր. աշխ. օր ժ.13.00-ից «Ադամանդ ԵԱՀ Բորսայի հարթակում՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարել՝ 56-52-28, 56-31-15 կամ այցելել **www.borsa.am** կայքը:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 20.01.2010 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	377.36
EUR	1	ԵՎՐՈ	535.47
RUR	1	Ռուս. ռուբլի	12.73
GEL	1	Վրաց. լարի	221.11

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.01.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: